№ 9 (110) X ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ 1900

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԱՄԱՆՈՐ
A.R.F. BURO
LIBRARY

PRO ARMENIA

Մոխրակոյտի վրայ բազմած, արտասուքը աչքերին, մի ձեռքը կրծքի լայնաբերան վէրքին, միւսը խորշոմած ճակատին, սգաւոր հայը, ինչպէս անմխիթար մեռելատէր, խաբուած զօրեղներից, մոռացուած երէկւայ վիճակակիցներից, շնչասպառ ականջ է դնում, որտեղից որ է, մի ցաւակցական խօսք, մի մխիթարիչ ձայն...

Եւ ահա այդ ձայներից մէկը՝

„Պրօ Արմենիա":

Հայաստանի համար...

Ի՞նչ է Հայաստան։—Աշխարհագրական անո՞ւն, պատմական աւանդաւո՞ր. չէ, այլ անլուր, առասպելական տանջանքների վայր, նահատակութիւնների մի վեթխարի մարմնացում, որ 95-ից դարձել է և ընդ միշտ պիտի մնայ պատմութեան մէջ սինոնիմ, համանիշ այն բոլորի, ինչ հնարել է չարագործ ուղեղը՝ մարդը մարդու ձեռքով տանջելու, մարդը մարդու ձեռքով մարտիրոսացնելու համար...

Հայի հայրենիքը չէ նա, այլ հայի տանջարան...

Իսկ ի՞նչ է ինքը, հայը։ Ստրո՞ւկ։ Ոչ.—Նա կուռեց։ Ազատ։ Ոչ.—Նա շղթայակապ է։ Անբախտ։ Ոչ.—Նա հիացմունք զարթեցրեց։ Թախտաւոր։ Ոչ.—Նա յուսախաբեւեց։ Ի՞նչ է ուրեմն նա, ի՞նչ և նրա վիճակի անունը։—Հայ։ Ուրիշ ածական գոյութիւն չունի բառարանների մէջ։ Կամ պիտի ստեղծել, կամ երբ հարկաւոր է ցոյց տալ մի ազգ, մի մարդ, մի անհատ, որ ստրուկ է՝ թէև արժանի ազատութեան, տանջւած՝ բայց արժանի երջանկութեան, խաբուած՝ բայց արժանի անկեղծ աշակցութեան, շղթայակապ՝ թէև պատմութիւնից կոչւած շղթաները փշրելու,—այն ժամանակ գործ ածեցէք մի բառ միայն՝—Հայ։ Ուրիշ բառ չկայ։ Հայ,—տանջւող մարդն է դա։

Տանջւող մա՛րդ...

Դա է ժամանակակից մտածողի նշանակէտը, նրա յոյզերի և հոգեկան փոթորիկների նպատակը, սիրած և անսահման սիրոյ մէջ՝ ատած առարկան։ Մարդասիրութեան տանջանքն է դա։ Հին սպարտացու իդէալն էր—կուռել հայրենիքի համար։ Նախկին քրիստոնիայի իդէալը—խաչի համար։ Ժամանակակից մարդու իդէալը—տանջւողի համար...

Տանջւող՝ հայրենիքի մէջ, տանջւող հայրենիքից դուրս. տանջւող խաչի համար, տանջւող խաչից հեռու։ Այլևս ոչ մի սահմանագիծ, ոչ մի շրջանակ, ոչ կրօնի, ոչ հայրենիքի։ Մարդու համար տրոփող սիրտը այսօր այլևս սահման չէ ճանաչում. նա բողբոջում է ամէն տեղ, ուր բռնութիւն կայ. հնչում է իր ձայնը ամէն տեղ, ուր կարիք կայ. ցասման աղաղակ է բարձրացնում ամէն անգամ, երբ օգնութիւն աղերսող կայ, մի օր Ցունաստան, միւս օր Լեհաստան, մի օր Կուբա, միւս օր Տրանսվալ, մի օր Մակեդոնիա, միւս օրը Հայաստան։

Այս ներքին մեծութեան խթանն էր, որ մղեց մեծ Բայրոնին Ցունաստան, մեծ Գալիբալդիին Ամերիկա, Լաֆայէտին Միացեալ-Նահանգները. այդ ոգին էր, որ մի խումբ քաջեր մղեց Թեսալիա՝ Զիպրիանիի ձեռքի տակ, մի այլ խումբ ազատասէրներ Տրանսվալ՝ Վիլլբուա-Մարիոյի ձեռքի տակ... Դրա մէջն է ժամանակակից մտածողի, գործողի, դրողի գաղափարական մեծութիւնը, նրա ուժը, նրա հրապոյրը, ինչպէս և, աւա՜ղ, նրա հոգեկան կրկնակի տանջանքը...

—

Ահա գրողը սեղանի առաջ.—ամբողջ զէնքը՝ մի կտոր թուղթ, մի փոքրիկ գրիչ։ Շրջապատող պարզութեան մէջ նրա կուրծքը ներքին փոթորիկի մի շտեմարան է ներկայացնում. նա յուզւած է, ենթակայ աննկարագրելի վշտերի։ Լուրերը գուժաբեր են, ծանր, յուզող։

Դիտում է նա, ինչպէս արծիւը ծերպի վրայից, տանջւող, հալածական, թշւառ մարդուն ամէն տեղ, բոլոր անկիւններում.—և այն ձորերում, ուր կատաբեց կոտորածների կլասիք ողբերգութիւնը, և այն լեռների տակ, ուր հելլէն գիցաբանութիւնը շղթայեց Պրոմեթէոսը. այն վեհանուն վայրերում, ուր Պերիկլէսների և Դեմոսթենէսների հայրենի ստեղծագործութիւնը զոհ տրւեց փաշաների տիրապետութեան. կղզիների շուրջը, ուր „վայրենի" Ագվենալդօ ազատութեան երգեր հիւսեց իր ժողովրդի վշտերից. սրբազան Գանգէսի ափին, ուր դեռ սաւառնում է Բրահմայի վարդապետութեան դարևոր ոգին. Աֆրիկեան դաշտերում, որտեղ նորագոյն հերոսները նորագոյն Թերմոպէլ ստեղծեցին. եկեղեցու մէջ, ուր անօգուտ Աստծու անունով ազատ միտքը, շարունակում է կրել շղթաներ, հիւսւած „սուրբ հայրերի" փափուկ մատներով. գահերի շուրջը, ուր „հայրախնամ" քօղի տակ նոր լուծեր են դնում

ազգերի շլինքին, կոփուած գայիսանակիր ձեռքերով...

Տարիներ առաջ, հատ հատ, բացառիկ էին „օտար" տանջողների պաշտպանները. բայց երէկուան բաժան ուժերը այսօր միմեանց մօտենում, խմբւում են, ամբողջ կազմակերպութիւններ, կուսակցութիւններ են դառնում ընդունակ ղեկավարելու, նոյնիսկ սպառնալու նրանց որոնց փեշակը դարերի ընթացքում միմիայն սպառնալիքն է եղել։ Մարդկային տանջանքը, թոյլերի վիշտը, խողխողողների երկրից հնչող աղէխարշ դոչիները միացրին միմեանց անծանօթ, տարբեր ազգերի, տարբեր կրօնների պատկանող հոգիները։ Բողոքը այժմ ա ն հ ա տ ա կ ա ն չէ, այլ խ մ բ ա կ ա ն։ Դա թշուառների սփոփանքն է. սպառնալիք բռնութեան...

Եւ դրա մի նոր ապացոյցն է այս օրգանը, „Պ ր օ Ա ր մ է ն ի ա", որ լոյս տեսաւ Փարիզ, նեղուած հայերի պաշտպանութեան—զարդարուած այնպիսի գրաւիչ անուններով՝ ինչպէս Կլէմանսօ, Անատոլ Ֆրանս, Ժօրէս, Պրեսանսէ, Դը Ռոբէրտի, Ֆերրի, Վանդերվելդ, Քիաո, որոնց անշուշտ կը գան ձգնակցելու շատ հայասէրներ Լամանշի և Հռենոսի միւս ափերից, և դուցէ այնպիսի երկիրներից, ուր նահատակ ժողովուրդների աղերսը դեռ ցասման աղաղակներ չէ կորզել անտարբեր բերաններից...:

—

Կ'անցնեն տարիներ...

Արտասուքի ձորերում — մեր անխախտ հաւատն է դա — կը ցամաքի արեան վերջին կաթիլը, և բիբլիական դրախտի փառաբանուած գեղեցկութեան հովիտներում՝ հարաւի ջքնաղ աբեգակը սև-սև դիակների փոխարէն կը դայ լուսաւորելու շինականի կենդանարար աշխատանքը, ազատութեան անթեւեր արգասիքները... Եւ այն երջանիկ օրերին, երբ խողխողուած հայերի ազատ որդիքն ու թոռները, դրդուած ներքին բնազդներից, կը դառնան դէպի պատմութիւն, դէպի հայրենի ստրկութեան սև օրերը, այն ժամանակ,—հաւատացէք, օտար բարեկամներ—այն ժամանակ ձեր անունները կը յիշեն այն խնկելի անունների հետ, որոնց կրած վիշտը ապագայում պարծանք պիտի կոչի... Եւ հպարտ այն հերոսների յիշատակով, որոնք իրենց արիւնը տուեցին հայրենի երկրում ազատութեան ծիլեր բուսցնելու համար՝ հպարտ այն զոհերով, որ ազգային սուգի մէջ անդամ ժպիտ է բերում դառնացած սրտերին, ապագայ հայութիւնը խորին յարգանքով կը յիշի և ձեր քաղցր անունները, ձեր գործը, ձեր գրիչը...

Եւ աւելին։ Ազատութեան օրերին, հայկական բարձրավանդակի այնպիսի խորշերում, որոնց անունն անգամ առիթ չէք ունեցել լսելու, հայկական նոր սերունդը ձեր անունների հետ միասին բարձրագոչ կը հնչեցնէ և այն գաղափարները, որ մենք ձեր միջոցով և ձեր հայրենիքից ստացանք — գաղափարներ՝ այժմ հայածական սուլթանի երկրում, — մղելով նրանց դէպի աւելի հեռու, դէպի ասիական խորքերը...

Աւելի մեծ վարձք չկայ գաղափարի մարդու համար։ Եւ այս թող լինի ձեզ արժանի վարձքը։

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՐԻՔ

II

Առաջ բերելով հ ա յ կ ա կ ա ն մ ի ջ ա վ ա յ ր ի, ազգային մեր առանձնայատկութիւնների խնդիրը, մենք լինք դնում մի մետաֆիզիքական հարց։ Եթէ հիմնովին մերժենք անգամ ց ե ղ ա կ ա ն ուրոյն, հիմնական տարբերութիւնների մասին գոյութիւն ունեցող յայտնի թէօրիաները (Մոնտեսկիո, Գիզո, Տէն, Ռէնան և այլն.), յամենայն դէպս պէտք է ընդունել առնուազը, որ կայ առանձնայատկութիւնների մի որոշ զ ա ն գ ւ ա ծ, որ այս կամ այն ազգութիւնը ստանում է երկար ժամանակ միևնոյն պայմանների ազդեցութեան ենթարկուելով և այդ առանձնայատկութիւնները — ժառանգական օրէնքի համեմատ — սերունդից սերունդ փոխադրելով։ Երկրի աշխարհագրութիւն, կլիմա, միջազգային դրութիւն, կառավարութեան ձև, օրէնքներ, պատմական անցեալ իր դժբախտութիւններով, յիշողութիւններով և փորձերով, գրականութիւն, լեզու, կրօն և այլն,—ահա այն պայմանները, որ կարող են կրթել մի ժողովրդի մէջ այս կամ այն հակումները, որոնք իրենց տեսակով կամ չափով չեն կրկնւում ուրիշ ժողովուրդների մէջ։

Ահա ինչպէս է „յառաջացել մեր մէջ այն ա ռ ա ն ձ ն ո ւ թ ե ա ն հոգին, այն ա ն ս ա ր բարքը, այն կոպիտ ա ն ձ ն ա պ ա շ տ ո ւ թ ի ւ ն ը, որ չէ թողնում հայերի մէջ գոյանալու մի ընկերական գ ո ր ծ, մի հասարակօգուտ հ ի մ ն ա ր կ ո ւ թ ի ւ ն"։ Ահա ինչպէս են զարգացել մեր մէջ այն բնազդները, որոնց համեմատ՝ „ուր հարկաւոր է եղել միաբանութեամբ գործ դնելու թշնամու դէմ .ք ա ղ ա ք ա կ ա ն ա ռ ա ք ի ն ո ւ թ ի ւ ն ն ե ր, հայերը՝ ա ն ձ ն ա կ ա ն շ ա հ ը գերադասելով ը ն դ հ ա ն ո ւ ր ի ց, կ ո ր ծ ա ն ե լ են իրենք իրենց մէջ"։

Թողնենք մօտիկ անցեալը։ Թողնենք այն զարմանալի տեսարանները, երբ Բերլինի դաշնագրից յետոյ՝ հայ ինտելիգենցիան, ընդհանրապէս վերցրած, առանց տեղեցը շարժելու, առանց մատը մատին խփելու՝ Եւրոպայից բացարձակապէս պահանջում էր „Հայկական անկախութիւն" (տես 1878-79 թուերի պարբերական հրատարակութիւնները) — ոչ աւել, ոչ պակաս, իսկ հայ բուրժուազիան, հաւատարիմ իր մշտական սկզբունքներին, մօդայի հարցի չափ անգամ կարևորութիւն չէր տալիս այնպիսի մի հսկայական խնդրի, ինչպէս էր հայկական դատը։ Դիմենք վերջին տասնամեակին միայն երբ հայ-

թրքական յարաբերութիւնները արդէն ստացան ամենասուր կերպարանք, կեանքի և մահու խնդիր ստեղծեցին մեզ համար և առաջ բերին մի տագնապալից, մի բացառիկ, մի անօրինակ ծանրագոյն վիճակ։ Ի՞նչ կարող է աւելի պարզ լինել քան այն, որ բացառիկ դրութիւնը պահանջում էր նաև բացառիկ եռանդ, բացառիկ գործունէութիւն, բացառիկ ճիգեր։ Բայց ո՞վ հետևեց այդ պահանջին՝ բացի ինտէլիգէնտ կամ զուտ ժողովրդական երիտասարդութեան համեմատաբար մի աննշան փոքրամասնութիւնից։

—

Ահա մի քանի գծեր։

Հաղարաւոր անհատներ կարելի է գտնել Հայերիս մէջ, որոնցից իւրաքանչիւրը կարող էր ամբողջ նահանգներ զինել Տաճկահայաստանի մէջ։ Դուրս եկաւ գոնէ մէկը։ 1895 թուին, պատմում է Մակկօլը „(Սուլթան և Պետութիւններ“) Հայկական կոտորածների տպաւորութեան տակ։

„Մի անգլիացի, իր քաղաքական համոզմունքներով պահպանողական, յայտարարեց, որ եթէ մեծ պետութիւնները, իրենց մեծազօր սկզբունքներով, արիութիւն չունեն սուլթանի ոճրագործ կառաղութիւնը սանձահարելու, ուրեմն Հայաստանում դիւանագիտութիւնը առնւազը կարող է փոխարինուել ինքնայօժարջանքերով, ինչպէս այդ եղաւ յունական անկախութեան կռուի ժամանակ, եւ իր կողմից նա առաջարկեց 5000 ֆ. ստ. (25,000 ֆրանկ), որ զէնք գնուի անօգնական քրիստոնեաներին բաժանելու համար Տաճկաստանի այն տեղերում, որոնք մատչելի են ծովի կողմից“։

Իսկ մե՞նք, հայե՞րս... Բաւական է յիշել որ ամենախոշոր գումարը, որ ամբողջ Հայութեան մէջ մի հատիկ մարդ նուիրել է զէնքի գործին, այդ եղել է ընդամենը 25,000 ֆրանկի չափ մի ծախս... Բայց միաժամանակ քանի-քանի՜ անձնուէր և փորձաւոր գործիչներ, քանի-քանի՜ գաւառներ կորան, հալեցին միմիայն և միմիայն տարիների ընթացքում և ամենաբարեյաջող հանգամանքներում զէ՜նք, զէ՜նք ու զէ՜նք սպասելու և վերջիվերջոյ չստանալու պատճառով...

Հազարաւոր նիւթապէս ապահով հայեր Հնդկաստան, Անգլիա, Ամերիկայ, Աֆրիկայ, ջահանամ են գնում՝ ով գիտէ ինչ դժոխային միջոցներով՝ իրենց ունեցածը աւարլացնելու համար, բայց և ոչ մէկը չգտնուեց, որ այսպիսի մի անսովոր պատմական դժբախտութեան օրերում տեղիցը շարժուէր հասարակօգուտ ոեէ ձեռնարկի համար։ Եւ այս ոչ միայն հին սերունդի ներկայացուցիչների մէջ, այլև երիտասարդ դրամատէրերի շրջանում, որոնք ունեն և ուսում, և զարգացում ու երբ սկսում են խօսել հասարակական գործունէութեան և ժողովրդի շահերին ծառայելու անհրաժեշտութեան վրայ, Գլադստոններ ու Լասսալներ պէտք է գերեզմաններից կանչեն նրանց հետ մրցելու համար...

Քաղաքակիրթ աշխարհում էլ ժողովուրդ չմնաց, որ այս կամ այն չափով արձագանք չտար հայկական թշառ վիճակին։ 1894 թուականից սկսած՝ անգլիացիք, ֆրանսիացիք, հոլանդացիք, ամերիկացիք, զուիցերիացիք, նոյնիսկ գերմանացիք հայերին օգնութեան ձեռք մեկնեցին — երկրի մէջ հայ ժողովրդին դրամ, հաց և երկրագործական անասուններ բաժանելու կամ որբացած մանուկներին խնամելու և կրթութիւն տալու համար։ Իսկ ի՞նչ արին իրենք հայերը։ Մենք ունենք հազարաւոր հայեր, որոնցից իւրաքանչիւրը կարող էր նոյնքան մարդ կերակրել, նոյնքան որբանոցներ հիմնել, որքան այդ՝ արուեց մի քանի ազգերից ժողովուած դրամներով. բայց դո՞ւրս եկաւ այդպիսի մէկը։ Յայտնի է, որ միակ մի Զանշեան, ծագումով միայն հայ, իսկ կրթութեամբ կէս վրացի, կէս ռուս, իր անձնական աշխատանքով աւելին արեց հայ մանուկների համար, քան մեր „աղգասէր“ հարուստները։

Ո՞վ չէ յիշում 1890-91 թուականների աղմուկը հայ ինտէլիգէնցիայի մէջ՝ Տաճկաստանում թէ Տաճկաստանից դուրս, կանանց թէ տղամարդկանց, երիտասարդների թէ հասակաւորների մէջ։ Իսկ ո՞ւր են դրանք. 1891-92-ից սկսած։ Արժան գնով ազատութիւն ձեռք բերելու յոյսերով հարբած՝ դրանք մնացան յեղափոխական գործին, կարծես վախենալով, որ էգուց-միւս օրը յանկարծ առանց իրենց անմեղ աղմուկին էլ Հայաստանը անկախ երկիր կը հռչակուի և յետոյ այդ հանդիսաւոր օրը իրենք կը մնան առանց դափնիների։ Բայց հէնց որ իրականութիւնը պարզեց, որ գործը անորոշ ժամանակով՝ բացի զոհողութիւններից, ոչ մի տեսակ դափնիներ չէ կարող խոստանալ ոչ ոքի, դրանք չքացան, ինչպէս քամու մի շնչով ստեղծուած ալիք։ Դիցուք թէ հասարակ կամ ինտէլիգէնտ ամբոխի մէջ դա ընդհանրապէս հասկանալի մի երևոյթ է։ Բայց ո՞ւր մնացին նաև երբեմն յեղափոխական կետրոններում բազմելու համար գլուխ պատառող մեր պարոնները. ո՞ւր են երբեմն գլխաւոր վարիչ անդամների մեծագոյն մասը. ո՞ւր են գիշեր-ցերեկ դրանց շուրջը պտտող „համոզուած“ յեղափոխականները. ո՞ւր են յեղափոխական ամբողջ շարժման տօն տալու հաւականութիւնը տածող կամ իրենցից հարիւր անգամ աւելի զոհողութեան ընդունակ տարրերի գլխին „անձնանուիրութեան“ և „նոր արշալոյսների“ մասին ճառող կարմիր դրօշակակիրները։ Հաւատարիմ իրենց „խելօք“ հայրերին, նրանք իրենց համար այժմ նոյնպէս աւելի ձեռնտու պայմանների և հասարակական դիրքի են ձգտում, ինչպէս ձեռնտու կերպով այն ժամանակ կարող էին յեղափոխութիւնով զբաղուել...

Նոյն 1890-91 թուականներին էր, որ ռուսահայ և տաճկահայ ինտէլիգէնցիան իրար հետ մրցում էին հայ ժողովրդի ազատագրութեանը նուիրուելու փառաւոր խոստումներում։ Իսկ յետո՞յ... Յետոյ տաճկահայ ինտէլիգէնտի իդէալը դառաւ ամբողջ երկրագունդը՝ մինչև դոլլարների հայրենիք Ամերիկան, իսկ ռուսահայինը—

Բաքու, ուր մարդիկ երբէք դէպի վերը, դէպի բարձրը, դէպի իրենցից հեռուն չեն նայում, այլ միշտ դէպի ներքև, դէպի երկրի տակը, դէպի դժոխային այն խաւարը, ուր 150-200 սաժէնի խորութեան անդունդներում թագնուում է նաւթաջրի կախարդիչ փայլը... Ընդհանուր դրութիւնը ծանր է. Տաճկաստանում կոտորում են, Ռուսաստանում հալածում — և ահա հայ ինտելիգէնտը, հաւատարիմ իր մօր կաթի հետ ծծած ստրկական բնազդներին, զգում է իրեն ինչպէս մի ժանտախտի օրերում. „աղատուէր, ով կարող է". „փախիր՝ ով ոտքեր ունի," — և փախչում են՝ ոտի տակ տալով բոլոր այն տարրական պարտաւորութիւնները, որ ծանրանում են նրանց վրայ այսպիսի մի դժուար պատմական րոպէում:

Ամբողջ իննսնական թուականներում հայ ուսանողների թիւը, մանաւանդ Եւրոպայում, աճում է: Նահատակած յեղափոխականների ընկերները անգամ՝ դրանց անունով վրէժ չեն կոչում, այլ այդ նահատակների հետ իրենց ունեցած մտերիմութիւնը պատանդան են շինում նրանց յիշատակը յարգողների առաջ, որպէսզի իրենց համար թոշակ գտնեն և Եւրոպա գան՝ այստեղ „գեղեցկի և բարոյ" իրենց ճաշակները նրբացնելու համար... Ուսման դէմ իհարկէ մենք ոչինչ չունենք: Բայց երբ մենք յիշում ենք, որ գիտութեան և արուեստին, որ հասարակական բարոյականութեան և գրականութեան ոչ մի ազգ այնքան հանճարներ չէ տուել, որքան հրէական ազգը, որը սակայն՝ ամենքից արհամարուած՝ այսօր ծեծւում և արտաքսւում է աշխարհիս բոլոր անկիւններում. երբ ինկատի ենք առնում, թէ ինչ սիրով են մեր վաշխառու հայրերը, որոնք երբէք իրենց որդոց բ ա զ ա զ խ ա ն ա էին ուղարկում, այսօր ամէն զոհողութիւններով ուսման տալիս դրանց. երբ մի փոքր էլ մտերիմից նայելով այդ ուսանողներին՝ տեսնում ենք, թէ որքան մեծ տոկոսը դրանցից զանազան կարգի բճիճներից, թթուատներից ելն մրայն դիպլոմների զրահներ են ոլսում իրենցից աւելի փարուկ ապրողների հետ յաջող մրցելու համար, — այն ժամանակ ակամայ սկսում ենք կասկածել՝ թէ արդեօք ներկայ ճգնաժամում այդ ամենը համապատասխանում է մեր ժողովրդական պահանջներին...

Եւրոպայում այնպիսի յայտնի անձնաւորութիւններ, ինչպէս Ռիչիոտի Գարիբալդի, Ամիլկար Չիպրիանի, Ֆրանսիս Դը Պրէսանսէ, Ժերո-Ռիշար, Ժորժ Ֆավոն և Ուրբէն Գոյիէ, ինչպէս յայտնի է ընթերցողներին, „Դրօշակի" խմբագրութեան դիմումներին պատասխանեցին հրապարակաւ, հէնց „Դրօշակի" մէջ, արտայայտելով իրենց բոլոր համակրութիւնը դէպի մեր կռիւը և տալով իրենց ա ն ո ւ ն ն ե ր ը մեր ձեռքը նրանց համար անյայտ անձնաւորութիւնների ձեռքը, — իսկ հարիւրաւոր հայ պատանիներ, որոնց բերանին դեռ չէ ցամաքել իրենց մօր կաթը, այնքան խելօք, այնքան շրջահայեաց, այնքան բարձր են այդ բոլոր անձնաւորութիւններից, որ իրենց համար, նոյնիսկ նեղ շրջաններում, անպատեհաբար են համարում յեղափոխութեան կամ ուրէք յեղափոխական կազմակերպութեան համակիր անուանել և անել այն բոլորը, ինչ կարող են:

Իսկ ժողովո՞ւրդը: Կոմս Շոլլէն անուանով ֆրանսիացի զինուորականը Հայաստանում գործած իր մի ճանապարհորդութիւնից յետոյ՝ 1892 թ. գրում էր.

„... Եւ երբոր հայկական գիւղերում, ուր թագաւորում էր ամենասուրբ թշուառութիւն, մենք հարցնում էինք հայերին՝ թէ ինչ են նրանք մտածում անել, նրանք՝ փոխանակ մռնչալով իրենց զէնքերի վրայ ցոյց տալու, փոխանակ մտածելու, որ կարելի է նրանք կարող կը լինէին մի օր բոլորը միասին ոտքի կանգնել քրդերի դէմ, որոնք նրանց տանջում են, և ձեռք բերել, եթէ հարկաւոր լինի՝ իրենց արեան գնով, իրենց յաւերին մի հանգստութիւն, ինչպէս նաև մի որոշ ազատութիւն, — նրանք պատասխանում էին սարսափած և անհամարձակ, որ Աստուած իրենց թողել է, որ այլևս ուրէք յոյս չունեն, որ սակայն եթէ չարունակեն իրենց հետ այսպէս վարուել, իրենք մի օր կը գաղթեն Ռուսաստան՝ այնտեղ աւելի լաւ կեանք և ուրէք հանգստութիւն գտնելու համար":

1897 թուին մի ուրիշ ֆրանսիացի, պ. Կիմոն, գրում էր.

„Դիտուած է, իպալանս ամբողջ աշխարհը, որ վերջին կոտորածների ժամանակ՝ Պոլսում և Հայաստանում ուրէք բանի անպէտք ջահիլ թիւրքերը յարձակւում էին յաղթանդամ հայերի վրայ, որոնք՝ եթէ ընդունակ լինէին իրենց ձեռքերը գործածելու, բռունցքի մի հարուածով կարող էին լուերի նման ջախջախել իրենց վրայ եկող թշուառականներին: Այդ հայերը տեսնելով քիւրդերին, նրանց ոտքի տակն էին ընկնում, ձեռքերով ծածկում էին երեսները և թոյլ էին տալիս գլուխները կտրել կամ պատռել իրենց գանգերը":

Իսկ Ուրբէն Գոյիէն՝ նորերս „Դրօշակի" մէջ գրած իր յօդուածում ասում է.

„Հայերը իրենցից 300 հազար հոգի կորցրին՝ պարանոցները դանակի տակ դնելով. Եւրոպան դղրդեցնող ի՞նչ ահաւոր պատերազմներ կարող էին մղել՝ հրացանները ձեռքերնին, տասնապատիկ աւելի ամուր գնով"...

Հարիւր հազարաւոր նահատակներ, այդքան էլ գաղթականներ և կրօնափոխ եղած հայեր, իհարկէ, եթէ դուրս բերէին թշնամու դէմ իրենց մի տասներորդ մասը անգամ, գուցէ քարով և կացիններով էլ կարողանային „ահաւոր պատերազմներ մղել" և, „դղրդեցնելով ամբողջ Եւրոպան", աւելի քիչ զոհեր տային... Բայց դարևոր ստրկութեան և հալածանքի յաւիտենական գերի հայ ժողովուրդը, որին ամբողջ պատմութիւնը գերազանցապէս միայն մէջք ծռել էր սովորեցրել ընդունակ էր „ինքնապաշտպանութեան" ուրիշ ձևերի քան ամենակրաւորականները...

—

Ահա ուրեմն, իմիջի այլ պայմանների, որպիսի ներքին, վերին աստիճանի աննպաստ հանգամանքներում պիտի զարգանար հայկական խնդիրը և նրա արտայայտութիւնն՝ հայ յեղափոխական շարժումը:

Մենք իհարկէ կարող ենք, ինչքան թելադրում է մեզ մեր ա ն ձ ն ա պ ա շ տ արիւնը, մեղադրել յեղափոխականներին, որ նրանք 10 տարուայ ընթացքում

չկարողացան հիմնայատակ անել տաճկական պետութիւնը և նրա աւերակների վրայ պարզել հայկական ազատութեան դրօշակը։ Մենք կարող ենք, իհարկէ, նոյն մեր անձնապաշտ արեանը հետևելով, անիծել երկրագնդիս բոլոր քաղաքակիրթ ազգերին էլ, որ այն ժամանակ, երբ մենք անասնական թէ սրիկայական, վաշխառուական թէ ստրկական ժպիտներով վերաբերուեցինք դէպի օրաւուր մեր առաջը դնուող խնդիրները, նրանք,—այդ ժողովուրդները—գլխապատառ ոտի տակ չտուին իրենց բոլոր շահերը և հայկական կուի դաշտը չգրաւեցին... Այո, կարող ենք այդ էլ անել, ուրիշ շատ բաներ էլ անել, բայց... բայց ե՞րբ պիտի քաղաքացիական համարձակութիւն ունենանք մի փոքր էլ մեզ վրայ անդրադառնալու և մեր բարոյական պակասութիւններին, մեր վատառողջ բնազդներին, մեր ազգային ախտերին՝ „պատմական այդ չարիք“ ևս՝ որոշ տեղ տալու մեր կրած տառապանքներում ու մեր ներկայ ծանր կացութեան մէջ...

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

VI

Ճամբէս արունի հետք թողեր, կ'երթայ.—
Արունոտ ճամբէս մեր թշնամու դէմ.
Խէթ-օձը առջևս ընկեր ու կ'երթայ,
Ու. ագռաւները հետս ճամբորդ են։

Ձիս տխուր-տրտում կ'երթայ անդուման.
Ա՜խ, նա լաւ գիտէ, որ յետ չեմ դառնայ.
Դարդս թաղելու, ցրելու կ'երթամ
Դարդս-վրէժս, ու էլ յետ չեմ գայ...

Է՜հ, մնաք բարև՛, մեր դաշտ ու սարեր,
Ուր քօլ ու քարդ մեր արնով ներկաւ.
Ինձ էլ չես տեսնի, իմ խեղճ, ազիզ մէր,
Ու գերեզմանս էլ չես գտնի բնաւ։

Կարմիր օրերի անգին ընկերներ,
Իմ տեղս պահէք, երբ գաք իրար քով.
Ա՜խ, եարիս ասէք, որ ես էլ չկամ,
Որ լայ, վրէս լայ անուշ աչքերով...

ՀԱՅԿ-ԳՈՒՍԱՆ

ՎԱՂԳԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

„Դու, ով ցանկալի Վան, իմ հայրենիք,
Սիրոյդ կարօտով մաշւիմ ես հերի՛ք...
ՎԱՂԳԷՆ

Ձայդուկ, մի վախնար քրդի գնդակից,
Նա մահաբեր չէ քաջերիդ համար,
Քո „ջանֆիտայի“ ահեղ անունից
Քիւրդը սոսկում է, ինչպէս դիւահար։

Առէք հրացան ու ելէք հանդէս.
Ցանջանքի մէջ է ձեր մայր հայրենիք։
Միթէ՞ չէք լսում, նա կանչում է ձեզ.—
„Օգնութեան արի՛ք, հարազատ որդիք“...

Ձեր հրացանը վրէժով լցրէք,
Զարգէք թշնամուն, թշնամուն գազան.
Դուք ձեր մօր սիրուն զարկէք ու ընկէք,
Միայն թէ կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան...

ՊԵՏՐՈՍ-ՍԱՄՈՒԷԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Աշխարհի էն սրիկայ, էն աւազակ, էն անբարոյական ու էն չարագործ և մարդկային զգացումէ զուրկ, բառին ամենալայն մտքով փիս կառավարութեան մը դէմառդէմ կը գտնուի հայ ազգը։

Եթէ կը հաւատայ հայ ազգը, որ օր մը էն օր մը արդար և աշխարհագղորդ վրէժխնդրութիւն մը, որ բովանդակ մարդկութեան սրտէն օ՛ն մը խլէ, պիտի փայլատակէ սուլթաններու արիւնով ուռած աչքերուն դիմաց կամ ոճիրներով ճահճոտած գանկերուն վրայ, յեղափոխութիւնը պիտի կրնայ ընել միայն։ Այդ օրը թիւրք կառավարութիւնը հարէմներու ֆէրէճէներու տակէն անվարտի դուրս պիտի պրծնի, սարսափէն կապուտցած, հանդիսատես ըլլալու համար, արիւնի և բոցեղէն ողբերգութեան դժոխային տեսարաններուն։ Թիւրքիոյ վերջին դատաստանը յեղափոխութեան ձեռքն է։ Ան գիտցած ըլլան բոլոր թուլահաւատները ու թերահաւատները, ծոյլերը, անհոգները ու գահիճները։ Սուլթանը, Իզզէտի պէս իշխողները սուսերամերկ պիտի հետապնդուին՝ նոյնիսկ եթէ յօանական պատուելի Կիյոմի ծոցը ապաստանին։

Եթէ Թիւրքիան հայրենասիրական սկզբունք կը դաւանի ոճրագործութիւնը, ի՞նչ տեսակ ներքին ձայն, ըլլայ Սոկրատի դէմը, պիտի համարձակի բարոյական օրէնքներ թելադրել, համբերութեան յորդորել մեզի, որպէս զի մենք մեր մարդկային արժանապատուութեան և հայրենասիրական կոչումին դրժենք։

Թրքական սիֆիլիսիք պետութիւնը երբէք մտքէն չանցնէ որ հայերու սրտին մէջ մեռած կըլլայ հայրենասիրութեան ու վրէժի վագրը՝ կամ անոնց դատը կորսուած. մեր անսահման ու ծովածաւալ ատելութեան ու անսիրելութեան անհաշտ ոգին, ինչպէս նաև մեր բոլոր իրաւունքները, իրեն յայտնի են, և վաղ թէ ուշ, սա կամ ուրիշ ձևով մը՝ պիտի պայթի անոր գլխին...

Երևակայամտութեան կամ թռուցիկ կրքոտ մեծխօսիկութիւնով չէ որ կը գրենք, այլ մեզի կը ներշնչէ մեր իրաւունքին, մեր գոյութեան և մարդկային տարդութեան սարսռացնող գիտակցութիւնը, այլ մեզի կը թելադրէ տարիներէ իվեր այն ահռելի կանոնաւոր և կանխամտածուած գազանային ոճիրներու ու հալածանքներու անվե՛րջ, անվե՛րջ սարսափներու թափօրը, մարտիրոսացած երկրի մը կուռ թախիծը՝ զոր ամէն օր արտասուագին՝ աչքերով կը դիտենք ու կը լափենք։

Հայաստանի բոլոր նահանգներուն մէջ թիւրքերը՝ քիւրդերուն հետ մէկ եղած՝ օր չանցնիր սպանութիւն

ներ, աւերումներ ու առևանգումներ չընեն։ Իշխանութիւնները ոչ մէկ միջոց ձեռք չեն առներ այդ կոտորածներուն ու սարսափներուն առջևը առնելու համար։ Եղեռնագործութեան վայրագ անիշխանութիւնը կը թաթագաւորէ հոն։

Սեպտեմբերի մէջ քիւրդերը Արաբկիրի Էնէզիկ գիւղին վրայ կը յարձակին, առանց տեղին թիւրքերուն մէկ մազին դպելու՝ կը թալանեն հայոց տուները, կըսպաննեն քանի մը հոգի, և կառավարութիւնը ձայն չի հաներ։

Պիթլիսի Պօրու գիւղի մէջ քիւրդերը կը յարձակին վանքի մը վրայ, վանահայրը կը վիրաւորեն ու տեղին գլխաւոր բնակիչներն ալ կըսպաննեն։

Տիգրանակերտի նահանգին մէջ միւսիւլմանները կը յարձակին ութը հայ գիւղերու վրայ, կաւերեն ու կը կոտորեն. զինւորները երբէք չեն միջամտեր։

Պիթլիսի նահանգի հայերու վիճակը պարզապէս սըրտաճմլիկ է։ Ամեն տեսակ անլուր հալածանքներէ զատ, հայ հողագործները փոխառութիւն չեն կրնար ընել երկրագործական պանքայէն, որուն հիմնելուն մեծապէս իրենք են նպաստած։ Ամենաչնչին փոխառութիւն մը ընելու համար, ստիպւած են իրենց ունեցած չունեցածը գրաւի տակ դնել։

Կառավարութիւնը ամեն արու հայ ճամբաներու ձրի շինութեան կ՚աշխատցնէ, ատով ալ չի բաւականանար. կըստիպէ որ հայերը ուէ գիւղի մէջ կառավարական շէնքեր շինեն ձրիաբար, ոչ միայն ազատ աշխատանքին զոհելով, այլև շէնքին ատաղձը և ծախքը պէտք է որ հայերը հայթայթեն։

„Իմաստուն“ ու „հեռատես“ կառավարութիւնը յաջողած է ցարդ քանի խօնախներ, մզկիթներ, զօրանոցներ, հեռագրատուն շինել տալ հայերուն այս տարւայ մէջ։

Այդ տարապահակ և տաժանակիր աշխատանքը կը յիշեցնէ մեզի Փարաւոններու օրով իսրայէլացիներուն տառապանքները, որոնք գաւազանի հարւածներուն տակ, Նեղոսի Տէլդային մէջ, Եգիպտոսի ամրոցները կը կանգնէին, աղիւս կը շինէին և... ազատութեան Մեսիայի մը ախը կը քաշէին։

Հայ ժողովուրդը իր դահիճներուն համար զօրանոցներ կը բարձրացնէ ձախ ձեռքով... աջով քարքանդ ընելու համար գուցէ։

Մուշի քանի մը հայ գիւղերու մէջ բռնի թիւրքեր և քիւրդեր հաստատւած են, որոնք գիւղացիները իբրև ստրուկ կը ծառայեցնեն իրենց առօրեայ աշխատանքներու համար, և իրենք կռնակնուն վրայ քէյֆ կ՚ընեն։ Շրջուն սիւվարիները, իբր թէ երկրի ապահովութեան համար, գեղէ գեղ ման կուգան, կուտեն կը խմեն իրենց ձիերուն հետ ու... առանձին տուրք ալ կը հաւաքեն։ Շատեր յուսահատ և սարսափահար միւսիւլմանութիւն կընդունին, մանաւանդ հայ աղջիկներով լեցւած են հարէմները։

Վերջերս եկած տեղեկագիրներ կը պնդեն որ Սպաղանքի կոտորածին ճիշդ թիւը 220 հոգի է։ Իսկ Սասուն իբր քննիչ զրկւած Էնվէր փաշայի տեղեկագրէն ձանձուն չկայ, թէև շատոնց ետ դարձած է։

Որպէսզի թիւրքերը ապացուցանեն բովանդակ մարդկութեան առջև թէ իրենք ամենասրիկայ խեղկատակներ և սինլքորներ են, Պիթլիսի զինւորական հրամանատար, Սպաղանքի կոտորածի հերոսը, աշխարհահռչակ Ալի փաշան, որ նոյնիսկ պաշտօնական եղած էր, Խարբերդի ու Տէրսիմի գաւառներուն մէջ բարենորոգումներու վերատեսուչ կարգած են։

Թիւրք կառավարութեան Տէրսիմի վրայ ուշադրութիւն դարձնելը նշանակութենէ զուրկ չէ։ Եւ պապարիկիդ Ալի փաշան կերևի կուզէ վարպետօրէն ոտքին տեղ ընել այդ անզուսպ և կառավարութեան թշնամի քիւրդերուն մէջ և սիրաշահօրէն ծուղակը ձգել զանոնք։

Երևակայել որ Տաճկաստանի մէջ մինակ Տէրսիմն է մնացեր բարենորոգելու համար, ան ալ աւազակապետ և անկիրթ Ալի փաշայի մը ձեռքով, մարդ անբարոյականութեան մրուրը քամած կամ խելառած ըլլալու է։

Եւ գիտենք, ժամանակի իմաստութիւնը և փորձառութիւնը կը ցուցնէ մեզի՝ թէ հոն, ուր Հազրէթի սուլթան Ապդիւլ Համիդ-Խան-Ղազի-Շահինշահը բարենորոգումներ գործադրել ուզած է, „սխալմամբ“ կոտորածներ սարքած են։ Ուրեմն Թիւրքիան միշտ Թիւրքիա է՝ էտէպսիզ և ոճրագործ։

Այս ամէնը արևէն աւելի պայծառօրէն կը հաստատեն — սուլթանի մը գարշահոտ ուղեղը ունենալու չէ անպատճառ ըմբռնելու համար հետևանքը—որ Հայաստանի վիճակը երթալով աւելի կը վատթարանայ, աւելի արագօրէն կը կատարւի ջնջումի էվօլիւսիոնը քան երբէք և թէ մութ նոր տառամ մը կը պատրաստւի հոն դժբախտ հայ ժողովուրդի գլխին։

Հայրենիքի ծայրագոյն աղէտին դիմաց, սօթտենք մեր բազուկները, նշանաբան ընտրելով Շատօպրիանի գեղեցիկ և ճշմարիտ խօսքը

„Ցեղափոխութիւնը կիսատ ընողները իրենց գերեզմանը կը փորեն“։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 22 սեպտեմբեր

Քսանևմէկ տարի օրինական, անվտանգ, ցանկալի, իսկ 21 տարուց յետոյ անցանկալի, վտանգաւոր, ապօրէն։ Հայոց հրատարակչական ընկերութիւնն է այդ, որի փակման գոյժը դուք արդէն ստացաք։

Պաշտօնական կարգադրութեան մէջ, ինչպէս միշտ, և ոչ մի բացատրութիւն, ոչ մի պատճառաբանող բառ որ ուրիշ խօսքով կը նշանակի՝ վտանգը մեծ է, պետական, անյարմար հաղորդելու „ի գիտութիւն հասարակութեան“։

Ահա նրա բովանդակութիւնը.

„Լսելով ներքին գործերի մինիստրի հաղորդագրութիւնը մայիսի 30-ից, 1900 թիւ, № 1270, „Հայերէն գրքերի հրատարակութեան Թիֆլիսի ընկերութեան“ փակելու մասին, մինիստրների կոմիտէն կարծիք յայտնեց,—այս առաջարկութիւնը հաստատել։

„Թագաւոր կայսրը, 1900 թ. յունիսի 16-ին, բարձրագոյն բարեհաճութիւն տուեց այդ որոշման“։

Ուրեմն՝

Իշխան Գալիցին առաջարկեց փակել՝ և ներքին գործերի մինիստրը ընդունեց։ Ներքին գործերի մինիստրը

այդ առաջարկը ներկայացրեց մինիստրների կոմիտէին՝ և կոմիտէն նրան հաստատեց։ Կոմիտէի որոշումը տարեց կայսրին՝ և սա մտքով անգամ չանցկացրեց հարցնելու, թէ ինչո՞ւ են փակում, այլ տուեց իր բարձրագոյն հաւանութիւնը։ Ուրիշ խօսքով՝ մի ամբողջ կառավարութիւն, սկսած կովկասեան կառավարչապետից մինչև Ռուսաստանի միահեծանը, միացան և միացած ուժերով փակեցին մի փոքրիկ ընկերութիւն, որ հիմնուել է օրէնքով, գործել է օրէնքով և այժմ էլ պիտի ձեռնարկի իր փակման՝ նոյնպէս օրէնքով...

Ի՞նչ է, կը հարցնէք, այդ հիմնարկութեան յանցանքը, որի համար նա իր 21-ամեայ պատկառելի հասակում ենթարկուեց այդ օրինակ մի ծանր, անողոք, անդարմանելի պատժի։ Առաջինը այն, որ նա գրքեր է տպագրում, երկրորդը այն, որ հայերէն գրքեր է տպագրում։ Հայերէ՞ն, ո՞հ, որքան անախորժ, որքան սոսկալի է հնչում այդ բառը ռուս չինովնիկութեան և նոյնիսկ մինիստրական ու կայսերական ականջներին... Որքա՞ն դաւնութիւն, որքա՞ն վտանգ կայ այդ „անիծուած“ բառի մէջ... Եւ երևի երբ մինիստրների կոմիտէում վճռում էր փակել ընկերութիւնը, սլավ ցեղի ժամանակակից ղեկավարները ուսերը թափ տալով՝ հարցնում էին. „Եւ ի՞նչպէս է եղել, որ 21 տարուց իվեր դա գոյութիւն ունի“...

Այո, 21 տարուց իվեր։

1879 թուին էր, որ Թիֆլիսի գրական մի շրջանում միտք ծագեց հիմնել այդ ընկերութիւնը, որի նպատակը պիտի լինէր—տպագրել հայերէն գրքեր։ Մշակուեց նրա կանոնագրութիւնը և 1880 թուի յունուարի 21-ին կովկասեան նախկին փոխարքայ մեծ իշխան Միխայիլ Նիկոլայեվիչը հաստատեց նրան։ Կանոնագրութեան առաջին յօդուածի մէջ ասւած է.

„Հայերէն գրքերի հրատարակութեան Թիֆլիսի ընկերութիւնը“ հիմնուած է Թիֆլիսում և նպատակ ունի հրատարակել հայերէն լեզուով թէ ինքնուրոյն և թէ թարգմանական գրքեր։ Ընկերութեան հրատարակութիւնները ենթարկուում են տպագրութեան ընդհանուր կանոնադրութիւններին“։

Վերջին պարբերութիւնը արդէն բաւական էր, որ կովկասեան նախկին փոխարքան աչքերը խփած հաստատէր այդ կանոնագրութիւնը, որովհետև այն բոլորը, ինչ անցնում է ուս ցենզորի ձեռքով, երբէք և ոչ մի տեղ չի կարող լինել վտանգաւոր և երկիւղալի։ Ցենզուրան այնպիսի քուրանից չէ... Եւ հէնց այդ պարզ պատճառով է, որ 21 տարուայ ընթացքում ընկերութիւնը չի տպագրել կամ չի կարողացել տպագրել և ոչ մի գրքոյկ, նոյնիսկ ոչ մի տող, որի վրայ կարողանային մատնանիշ անել իշխան Գալիցին կամ ներքին գործերի մինիստրը, իբրև անցանկալի, վնասակար։

Դիմենք փաստերին։

21 տարուայ ընթացքում ընկերութիւնը տպագրել է 187 հատ գիրք (մի քանիսը նոյնիսկ վերատպումներ)։ Այդ գրքերը բաժանւում են՝

Թարգմանական	133
Կոմպիլիացիա	33
Ինքնուրոյն	21

Ասել է թէ՝ իբրև ինքնուրոյն գրուածքներ, որոնք կառավարութեան համար պիտի ծառայեն ինչպէս աւելի բնորոշ նիւթ, ընկերութիւնը տուել է ոչ աւելի քան տարեկան մի գիրք։ Եւ որպէսզի աւելի պարզ գաղափար կազմէք, թէ տարեկան 1 գիրքը չէր սպառնում քանդել Ռուսաստանը, բաւական է աւելացնել, որ այդ ինքնուրոյն համարուող գրուածքները, մեծագոյն մասամբ, ոչ այլ ինչ են, եթէ ոչ տեղագրական կամ ազգագրական նիւթեր և գլխաւորապէս հայոց հին մատենագրութիւնից, գրաբար լեզուով, վերատպումներ, որոնք այնքան անմեղ են, որ երևի ցենզորները թոյլատրում էին նոյնիսկ առանց կարդալու։

Թարգմանական գրուածքները, ինչպէս և կոմպիլիացիաները, աւելի քան „անվտանգ“ բաներ են — վէպիկներ, կենսագրութիւններ, գիտական զրոյցներ կամ բժշկական ու առողջապահական աշխատութիւններ, ինչպէս և դասագրքեր։ Բացի Շէքսպիրի մի քանի գրքերից, ինչպէս և մի-մի հատոր Դօգէից ու Մօպասանից, որոնց լաւագոյն էջերը, ի հարկէ, գրաքննիչը արգելել է, միւս բոլոր թարգմանութիւնները, քիչ բացառութեամբ, առնւած են ռուսաց գրողներից և ռուսաց գրականութիւնից։ Եւ եթէ նոյնիսկ եւրոպական գրողներից է, այդ էլ կատարւած է ռուսերէն թարգմանութիւնների միջոցով։

Ոչ մի փաստ, ոչ մի առիթ չկայ հեռաւոր կերպով անգամ պնդելու, որ ընկերութիւնը հետևել է կամ ունեցել է ոևէ քաղաքական կամ ազգայնական տենդենցիա. — միակ տենդենցիան եղել է հայերէն գրքեր տպագրելը, գրքեր, որոնք յաճախ վերաբերում են ընթերցանութեան ամենաչոր ճիւղերին։ Եւ եթէ կայ մի երևոյթ, որ պարզ նկատւում է ընկերութեան բոլոր հրատարակութիւնների ընթացքում, այն է, որ այդ հիմնարկութեան ղեկավարները ուզեցել են, որքան կարելի է, ծանօթացնել հայոց հասարակութիւնը ռուսաց գրողների և ռուս գրականութեան հետ և այդ շատ անգամ՝ ի վնաս գրքերի արժանաւորութեան։ Գուցէ այս է յանցանքը...

Անվտանգ լինելով բովանդակութեան և տենդենցիայի կողմից, հրատարակչական ընկերութիւնը վտանգաւոր չէր կարող համարւել և տւած գրքերի քանակութեան կողմից, եթէ մինչև անգամ նայելու լինենք այս գործունէութեանը այն „տարօրինակ“ տեսակէտից, որով ռուսաց կառավարութիւնը առհասարակ ցանկալի չէ համարում ընթերցանութիւնը։ Փաստ. 21 տարուայ ընթացքում ընկերութիւնը տպագրել է 187 գիրք, ուրեմն միջին թւով տարեկան $8^1/_2$ գիրք։

Տարեկան $8^1/_2$ գիրք. — դրանից էլ ի՞նչ կարող է լինել աւելի համեստ, աւելի անվտանգ։ Բայց գուցէ կարծողներ լինեն, թէ այդ գրքերը տպագրւել են եւրոպական գրականութեան մէջ սովորական դարձած քանակով, ամէն մէկը 20, 50 կամ 100 հազար, բազմաթիւ հրատարակութիւններով։ Միամի՜տ ենթադրութիւն։ Երկրորդ կամ երրորդ տպագրութեան արժանացել են միայն 4-5 հատ, իսկ գրքերը տպագրւել են միջին թւով 1,200 օրինակ։ Կան գրքեր, որոնք լոյս են տեսել միմիայն 500 օրինակ։ 3,000-3,500 օրինակ տպագրւել են ընդամէնը 3 գիրք և 5,000 օրինակ „Խօլերա“ գրքոյկը, որի մեծ մասը վճռւած է եղել տարածել ձրիաբար, որովհետև այն միջոցին այդ հիւանդութիւնը սպառնում

էր կոտորածներ անել կովկասեան գաւառներում.. Վերջապէս աւելի չէր էլ կարելի տպագրել, քանի որ ընկերութեան բիւդժէն հանում էր միջին թւով միայն 4,000 ռուբլու, այսինքն այնքան, որքան ամէն տարի դողանում է իւրաքանչիւր „նորին գերազանցութիւն“...

Ասել է թէ՝ քանակի կողմից էլ այդ անվտանգ գրքերը չեն կազմում հարիւր հազարներ, միլիոններ, ինչպէս այդ պէտք էր ենթադրել եւրոպական մաքով, այլ մի համեստ չափ, որով անկարելի էր ողողել հայաբնակ վայրերը, ինչպէս երևի հաւատացրել են իրենց տեղեկագրերի մէջ պետութեան „պահապանները“...

Կսկիծ պատճառողը միայն այն չէ, որ փակւում են մի երկու համեստ, բայց անպայման պիտանի հիմնարկութիւն, այլ այն, որ այս նոր բռնութեամբ ևս կառավարութիւնը նոր վէրք բաց արաւ հայոց հասարակութեան առանց այն էլ վերաւոր սրտում։ Կասկածների մի անվերջ շարան է դա, որ չի վերջանում և դեռ նորանոր առիթներ է որոնում։

Մինիստրութիւնը, իհարկէ, չի հրատարակի այն պատճառաբանութիւնը, որի վրայ հիմնեց այս այրենի կարգադրութիւնը։ Այդպիսի մի բան հրատարակել — կը նշանակէ խայտառակւել, ծաղրի առարկայ լինել։ Եւ եթէ մի օր այդ գաղտնի գօկումէնտն էլ, ինչպէս շատ ուրիշները, արխիվների խորքերից դուրս գալով՝ կը դառնայ ընդհանրութեան սեփականութիւն, այն ժամանակ կը տեսնեն ամէնքը, նոյնիսկ ամենանեղոմիտները, թէ ինչ հրէշաւոր և անամօթ ստի է զոհ գնացել մի հիմնարկութիւն, որ սկզբից մինչև վերջ եղել է օրինական, հեռու ուևէ տենդենցիաներից, և գործել է ցենզուրական ճանկերի տակ, տարին մի քանի անգամ մանրամասն հաշիւներ ներկայացնելով նաև նահանգական իշխանութեան։

Եւ վերջապէս խօմ չի կարելի տենդենցիա տեսնել այն բանի մէջ, որ հայը հայերէն գրքեր է կարդում, կամ այն բանի մէջ, որ մի ընկերութիւն ժողովրդին հասկանալի լեզուով և նրան մատչելի տառերով սովորեցնում է, թէ ինչ պիտի անել, երբ խօլերա է սկսւած, կամ ինչ միջոցներ պիտի գործ դնել, երբ խաղողի վազերը վարակւած են ֆիլոկսերայով, կամ որոնք են այն ձևերը, որով պիտի խնամել շերամի սերմը կամ բամբակի բոյսը... Ինքը կառավարութիւնը փակեց հարիւրաւոր դպրոցներ, չթողեց ժողովրդի մէջ լոյսի և ոչ մի կայծ. ինքը կառավարութիւնը ոչինչ չի տալիս միլիոնաւոր ազգաբնակութեան, որը փթում է տգիտութեան մէջ, զոհ գնում տարափոխիկ հիւանդութիւնների. ինքը կառավարութիւնը, ասում ենք, իր գանձարանից մի ռուբլի չի ծախսում ժողովրդին մի գիրք, մի բրոշիւր, մի տպած թերթ տալու համար, և երբ այս նոյն հոգսը իր վրայ է վերցնում մի ընկերութիւն՝ կօպէկ-կօպէկ հաւաքած փողերով, անդամավճարներից, երեկոյթներից և նուէրներից կազմած գումարով, — կառավարութիւնը արգելում է, կնիք դնում նրա դռների վրայ և յայտարարում փակւած, իբրև վնասակար, վտանգաւոր...

Ի՞նչ անուն տալ այդպիսի մի կառավարութեան։

Սրանից տարիներ առաջ՝ Պետերբուրգից սենատօրական քննութիւն ուղարկւեց նոր նշանւած մի քանի երկիրներ։ Եւ փաստերը քննելուց յետոյ, երբ „գերազանցութիւններից“ մէկը պատրաստում էր իր զեկուցումը՝ թէ „ամէն ինչ լաւ է“, աւելացնելով, որ „ռուսաց յաղթական զօրքի շնորհիւ ցիվիլիզացիան քայլառքայլ առաջ է գնում“, միւսը՝ համբերութիւնից դուրս եկած, խղճահարւած՝ բացականչեց. „Մենք տարածում ենք ոչ թէ ցիվիլիզացիա, այլ սիֆիլիզացիա“ („Мы распространяем не цивилизацию, а сифилизацию“)։ Դառն ճշմարտութիւն։ Ռուսաց զինուորականութիւնը և կաշառակերութեամբ յղփացած չինովնիկութիւնը ամէն տեղ, ուր նոր է ոտք դնում ճշմարիտ, ամէնից առաջ այդ ախտն է տարածում — սիֆիլիս։ Ինքը կառավարութիւնը, դրդւած „պետական տեսակէտներից“, գանձարանից ահագին փող է ծախսում նոր երկիրները ահագին թւով կանայք ուղարկելու, որպէսզի նրանք իրենց տաք գրկի մէջ հալեցնեն այն սառնութիւնը, որ նւաճած երկրների ազգաբնակութիւնը ցոյց է տալիս տիրող բռնապետութեան... Այդ պատճառով է գուցէ, որ շատ անգամ ռուս մարդը՝ վիշտը սրտին նկատում է. „ռուսականութիւն տարածողը ռուս զինուորը չէ, այլ ռուս կինը“... Եւ երբ հասարակաց տների, գինեվաճառանոցների և չինովնիկական անբարոյականութեան միջոցով սիֆիլիսի նման մի ախտ, շնորհիւ „բարեխնամ կառավարութեան“, աւերումներ է գործում նահապետական բարքերով ծածկւած անկիւններում, յանկարծ դո՞ւրս են գալիս ընկերութիւններ, խմբեր, որոնք բրոշիւրների միջոցով փորձում են կուել այդ աւերիչ ախտի դէմ, փորձում են հասկացնել ժողովրդին՝ թէ ինչ վտանգ է սպառնում նրան... Եւ „բարեխնամ կառավարութիւնը“ փակում է այդ տեսակ հիմնարկութիւնները իբրև վնասակար...

Տեղը չէ՞ միթէ կրկնել՝

„...Մենք տարածում ենք ոչ թէ ցիվիլիզացիա, այլ սիֆիլիզացիա“...

Այդպէս ուրեմն՝ հայ, ռուս, լեհացի, ֆինն ինտելիգէնտ մարդուն Ռուսաստանում ուրիշ ոչինչ չի մնում, բայց եթէ մի կողմ դնել գրիչը, գիրքը, լրագիրը, դպրոցը ու բաց անել հասարակաց տուն, գինեվաճառանոց, լրտեսական սենեակ կամ գնալ մտնել կազարմաներ, որպէսզի զիւր դայ ժամանակակից կառավարութեան, որպէսզի արգելքի, կասկածի, աքսորի տեղ՝ արժանանայ շքանշանի, պատի և պաշտօնի։

...Եւ երևի այս տողերի լոյս տեսնելու օրերին օրինական կառավարութիւնը կառաջարկէ Հրատարակչական ընկերութեանը՝ „համաձայն կանոնագրութեան“ — ո՜հ, որպիսի օրինապահութիւն — ընդհանուր ժողով հրաւիրել և վճռել՝ թէ ում պիտի հանի ընկերութեան գոյքը։ Գիտէ՞ք, մեր կառավարութիւնը այնքան օրինապահ է և կուշտ, որ չի խլի ընկերութեան կնիքը, հին կահկարասին և կամ պահեստում թափւած գրքերը, այլ անպատճառ կը պահանջի, որ ընկերութիւնը վարի համաձայն կանոնագրութեան՝ հաստատւած 1880 թւի յունւարի 31-ին կովկասեան փոխարքայի ձեռքով, որտեղ ասւած է.

„§ 38. Ընկերութեան գործունէութեան ընդհատելու միջոցին՝ այդ դէպքում գումարւած արտաքոյ կարգի ժողովը որոշում է Ընկերութեան բոլոր գոյքը յանձնել Հայոց հոգևոր դպրոցներից մէկին“։

Որպիսի դա՞ռն կատակ...

„Գոյքը յանձնել Հայոց հոգևոր դպրոցներից մէկին“, երբ այդ դպրոցների կեանքն էլ այս բոպէիս մազից է կախւած...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՎԻՐԱԲ ՄԵԼՔՈՆԵԱՆ ԴԱԼԵԱՆՑ



1900 թիւ մայիս 3-ին Պարսկաստանում մեռաւ 34 տարեկան հասակում Վիրաբ Մելքոնեան Դալեանցը, որը իր կեանքի վերջին 10 տարիները նուիրել էր հայկական յեղափոխութեան։ Դալեանցը, որի պատկերը տպագրում ենք, ծնուել է 1866 թ. Գանձակի Փիփ գիւղում։

90-ական թուականին Կովկասում արդէն սկսել էր մի թարմ ու կենսատու հոսանք, և երիտասարդ Վիրաբը ոտով գլխով նուիրուեց այդ հոսանքին։ Իր բնաւորութեան մաքրութեամբ և վեհութեամբ նա շուտով գրաւեց բազմաթիւ ընկերների սէրը և նրա բնակարանը դարձաւ բոլորի համար մի խորհրդարան։ Վիրաբի ոգևորութիւնը սակայն իր գագաթնակէտին հասաւ, երբ 1890 թուականին՝ Կարինի դէպքից անմիջապէս յետոյ՝ Կովկաս ժամանեց Ցարօնեցի Ցակովը սարկաւագը և Կուկունեանի հետ միացած՝ ձեռնարկեց մի մեծ գործ։ Վիրաբը անմիջապէս միացաւ սարկաւագի խմբի հետ։

Ինչպէս յայտնի է, խմբի նպատակն էր զէնք ու մարդիկ տեղափոխել երկիր և հետզհետէ կազմակերպել ժողովուրդը։ Բայց սահմանի վրայ հանգամանքները փոխուեցին. ռուս կառավարութիւնը խիստ միջոցների դիմեց, և խումբը սահմանագլխի զինուորների հետ մի ընդհարումից յետոյ՝ մասամբ ձերբակալուեց և մասամբ ցիրուցան եղաւ։ Կաղզւանի Խառ գիւղի մօտ, 1890 թ. սեպտեմբեր 26-ին, ձերբակալուում է և Վիրաբը՝ Կուկունեանի ու խմբի հետ։

Վիրաբը իր ընկերների հետ շղթայած էր Կարսի բանտում, մինչև 1892 թ. մայիս 7-ը, երբ սառնութեամբ լսեց այն դատավճիռը, որով դատապարտուում էր 26 ընկերների հետ 15 տարուայ տաժանակիր աշխատանքների Սիբիրի հանքերում, զրկուելով բոլոր իրաւունքներից։ Թէ ինչ կը նշանակի այդպիսի մի դատավճիռ լսել, դա միայն կը հասկանայ նա, ով մի անգամ դժբախտութիւն է ունեցել լսելու։ 1893 թուի սեպտեմբերի 22-ին Վիրաբը իր ընկերների հետ միասին փոխադրուում է Թիֆլիս, ուր բոլոր դատապարտուածները արդարութեան բարձրագոյն ատեանին բողոքել էին իրենց դէմ տրուած խիստ վճռի դէմ։ Բայց ո՞ւր էք փնտռում արդարութիւն բռնակալների երկրում։ Ինչպէս Թիֆլիսի դատաստանական պալատը, նոյնպէս և Պետերբուրգի սէնատը մէկը միւսի յետևից հաստատեցին Երևանի նահանգական դատարանի վճիռը։ Կառավարութիւնը և նրա գործակալները՝ լցուած մի առանձին ատելութեամբ դէպի հայերը՝ ծածկել էին ամբողջ գործում „հայկական շարժում“, „հայ յեղափոխութիւն“ ևն, ու դատապարտեցին բոլորին իբրև քրէական յանցաւորների, իբրև մարդասպանների, աւազակների։

1895 թ. աշնանը Վիրաբը 5 ընկերների հետ շղթայակապ հասնում է Զաբայկալ, 96-ին՝ Գօրնի Զիլինտոյ, և այստեղ սկսւում է նրա տաժանակիր աշխատանքը, պղնձի և արծաթի հանքերում։

1896-98 թուականներում հայրենիքում կատարուող դժբախտ անցքերի մասին հատ ու կտոր տեղեկութիւններ էին հասնում Վիրաբին։ Դատապարտեալների այդ մութ, մռայլ վայրերում՝ որտեղից որտեղ՝ Վիրաբը կարողանում էր թղթակցութիւն պահել իր ազատ ընկերների հետ։ Ստացած լուրերը սեղմում, պատառոտում էին նրա սիրտը, և այլևս անկարող լինելով դիմադրել իր ներքին պահանջներին, բորբոքուած վրէժխնդրական ոգով, նա կոչում է ընկերներին՝ „մահ կամ ազատութիւն“ — փախչել, թռչել, սլանալ դէպի մայր հայրենիք կամ մեռնել փշրուած շղթաներով։ Եւ երբ իր վիճակակից հինգ ընկերներից ոչ մէկը չէ համաձայնւում Վիրաբի այդ յանդուգն առաջարկութեանը, նա առանց վհատելու վճռում է իրագործել միայնակ՝ ու մի գեղեցիկ օր, փշրելով շղթաները և դուրս թռչելով պարսպից, մնաս բարով է ասում Գօրնոյ Զելինտոյին...

1899 թ. սեպտեմբերին էր, երբ յաջողուեց նրան ոտ դնել Կովկաս։ Անյագ տենչանքով այստեղ փնտռում է Վիրաբը իր նախկին ծանօթներին և այնքան տանջանքներից յետոյ՝ ազատութեամբ թարմացած՝ սկսում է նոր գործ պահանջել։ Իր բազմաթիւ բարեկամների թախանձանքը — Կովկասի մի ուսէ անկիւնում առայժմ հաստատուել մի փոքր հանգստանալու համար — Վիրաբը մերժում է անպայման և երբ մի ամիս յետոյ իր եղած քաղաքում նա հանդիպում է կղզու վրայ աքսորուած իր ընկերներից մէկին, որը նոյնպէս թռնելով Սախալինը մի երկար ու արկածալի ծովային ճանապարհորդութիւնից յետոյ հասել էր Կովկաս, նա վճռում է իր անելիքը։

1899 թուի հոկտեմբեր 6-ին նրանք անցնում են ռուս-պարսկական սահմանը և մտնում Պարսկաստան։ Ահա նոր շրջան, նոր գործիչներ, նոր ասպարէզ գործունէութեան։ Վիրաբի ոգևորութիւնը չափ չունի. նա մոռացել է այն բոլոր սարսափները ու արկածները, որոնց միջով անց էր կացել 9 տարի շարունակ։ Ատրպատականի կետրօնական կոմիտէն յանձնում է նրան երկու տեսակի պատասխանատու գործեր, որոնց նա նուիրում

է ամբողջովին՝ օրէցօր աւելի և աւելի գրաւելով կետրօնական կոմիտէի և ընկերների անպայման վստահութիւնը։ Սակայն վեց ամիս անգամ չէր լրացել այն օրից, երբ նա ստանձնեց այդ գործերը, և ահա Ճակատագրի վերջին անգութ հարուածը յաւիտեան կտրեց նրա տանջալից կեանքը։ Ապրիլի 22-ին, ձիով ճանապարհորդելիս, յանկարծ չար դիպուածով Վիրաբի ձին ընկնում է։ Գետին փռուած ձիու հետ ինքն էլ ընկնելով՝ Վիրաբը վնասում է իր աղիքները և 12 օր ծանր հիւանդութիւն քաշելուց յետոյ մեռնում է մայիս 3-ին, շրջապատուած ընկերների ու իրեն պաշտողների մի փոքրիկ խմբով։

Զնայելով, որ Վիրաբի թաղումը տեղի ունեցաւ հետևեալ օրը, մայիսի 4-ին, չնայած նաև այն հանգամանքին, որ կազմակերպութիւնը որոշել էր ամենապարզ ու համեստ կերպով կատարել թաղման ծէսը, բայց և այնպէս այդ հանդէսը անցաւ մի անսովոր փայլով։ Դրանում արտայայտուեց այն ընդհանուր կսկիծը, որ պատճառել էր Վիրաբի մահը բոլոր նրան ծանօթ շրջաններում։

Մեռաւ գաղափարի անվեհեր մի զինուոր ևս։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

V

Արևելեան հարցը՝ կրճռոտ, անլուծելի՝ շարունակում էր տանջել դիւանագէտներին։ Թիւրքիան շարունակ թատերաբեմ էր օտար ինտրիգների ու մրցակցութեան, ուր ռուսական ախորժակները աւելի և աւելի էին բորբոքում։ Պոլիսը իր բացառիկ դիրքով ու նշանակութեամբ շատ էր հրապուրում Ռուսիոյ վեհապետներին, և Նիկոլայ կայսրը պատրաստում էր — ոչ առանց դողացնող անհանգստութեան — յափշտակել „հիւանդ մարդու“ հարուստ ժառանգութիւնը։

Եւ որքան աւելի էին շեշտւում Ռուսաստանի յաւակնութիւնները, որքան աւելի էր առաջանում ցարը դէպի Պոլիս, այնքան աւելի էր յուզւում արևմտեան Եւրոպան, մասնաւորապէս Անգլիան։ Ամեն ոք զգում էր, որ ապագան յղի էր ահաւոր փոթորիկներով։

Իր հեռաւոր նպատակներին հետամուտ լինելով, ցարը երբէք չէր թողնում աչքից նրանց հասնելու անհրաժեշտ միջոցը — քրիստոնեայ ազգութիւնների սէրն ու համակրութիւնը։ Եւ ռուսաց քաղաքականութեան մշտական հոգն էր՝ միշտ աւելի զօրացնել իր „հովանաւորութիւնը“ Բալկանեան քրիստոնեաների վրայ։ Հովանաւորութիւն՝ այն մտքով, որ նրանք ազատուեն Թիւրքաց հպատակութիւնից, բայց և այն մտքով, որ նրանք չապրեն անկախ, քաղաքացիական կեանքով։ Ահա թէ ինչու, երբ Փետրուարեան յեղափոխութեան ալիքները հասան Մոլդաւ-Վալախիային և երբ այստեղ ևս սկսեցին սահմանադրական շարժումները, Նիկոլայ I, որ բնազդական սարսափ էր տածում դէպի յեղափոխութիւնը, շտապեց համաձայնութեան գալ սուլթանի հետ և 60,000 զօրք ուղարկեց Բուքրէշ՝ ազատագրական շարժումը խեղդելու։ Ռուսաց հովանաւորութեան հակառակորդները չարաչար պատժուեցին, և Ադրիանապօլսի դաշնագրով զիջած մի քանի իրաւունքներ, որոնք որոշ ազատութիւն էին տալիս վալախ ժողովրդին — ոչնչացան։ Մոլդաւ-Վալախիայի իշխանները զրկուեցին իրենց ընդհանուր պատգամաւորական ժողովներից և հօսպոդարներ ընտրելու իրաւունքից, որն այժմ անցնում էր ցարին ու սուլթանին։

Ռուսաստանը միշտ նորանոր պատրուակներ էր ստեղծում միջամտելու „հիւանդ մարդու“ գործերի մէջ։ 1848-1851-ին նրա գործակալները՝ պղտոր ջրում ձուկ որսալու նպատակով՝ աջողեցին խռովութիւններ յարուցանել տաճկահպատակ Բօսնիայում և Բուլղարիայում, սակայն տաճիկները բարբարոսաբար ճնշեցին խռովարարներին և Ռուսաստանը ոչինչ չշահեց։

Բայց Նիկոլայ կայսրը *a tout prix* խզել էր ուզում սուլթանի հետ, և ահա 1851-ին նա միջամտութեան մի նոր պատրուակ տեսաւ։ Դա Սուրբ վայրերի հսկողութեան խնդիրն էր Երուսաղէմում ու Բեթղէհէմում։ Այդ հսկողութիւնը դարերից իվեր պատկանում էր լատին կաթոլիկներին, որոնք գտնւում էին Ֆրանսիայի հովանաւորութեան տակ։ Ռուսաստանի վս դեմ ձգտումն էր՝ խլել լատիններից այդ իրաւունքը և յանձնել յունադաւաններին։ 1808-ին այդ ձգտումը իրագործուեց։ Ֆրանսիան՝ ներքին ալեկոծութիւններով կլանուած՝ մի վայրկեան մոռացութեան էր տուել իր շահերն արևմուտքում։

Բայց Նապոլէօն III, որ 1851-ին թագաւոր դարձաւ պետական մի հարուածով, որոշել էր անխախտ պահել Ֆրանսիայի պատմական իրաւունքները՝ ընդդէմ Ռուսաստանի ոտնձգութիւնների։ 1851-ին նա ուղղեց սուլթանին իր պահանջները Սուրբ վայրերի վերաբերմամբ։ Սուլթանը համակերպեց, բայց Ռուսաստանի սպառնալիքների առաջ ստիպուեց յետ առնել իր համաձայնութիւնը։ Սուլթանանիստ մայրաքաղաքում մի ճշմարիտ մենամարտ էր, որ սկսուեց Ռուսիայի և Ֆրանսիայի միջև։ Առաջինը բացորոշ նպատակ ունէր՝ ամէն կերպ դրդել Թիւրքիային դէպի պատերազմ։ . . 1853-ի սկզբներում իշխան Մենշիկով Պոլիս ուղևորուեց ցարի կողմից յատուկ յանձնարարութեամբ։ Նա սկսեց յորդորել սուլթանին՝ դաղտնի դաշն կապել Ռուսաստանի հետ, որով այդ վերջինը ձեռք բերեր ներգործական հովանաւորութիւն Սուրբ երկրի վրայ, միաժամանակ պարտաւորելով ապահովել սուլթանին Ֆրանսիայի յարձակումների դէմ։ Թուրք կառավարութիւնը խրախուսուած Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչներից՝ պատասխանեց, որ „յունադաւանութեան իրաւունքները յարգելով հանդերձ՝ անկարող է կապել մի այնպիսի դաշն, որը խախտում է նրա անկախութեան ու վեհապետութեան հիմնական սկզբունքները“։

Մենշիկով հեռացաւ Պոլսից թունաւոր սպառնալիքներով։ Տագնապը մօտ էր։ Յուլիսի 3-ին (1853) ռուսաց զօրքը անցաւ Պրուտ գետը և գրաւեց Մոլդաւ-Վալախիան։ Լուրը տարածուելուն պէս՝ անգլիական և ֆրանսիական նաւատորմիղը շտապով դիմեցին դէպի Դարդանէլ։ Երկու արևմտեան պետութիւնները Ռուսաստանի համարձակ ու վտանգաւոր արշաւանքի դիմաց համաձայնութեան եկան պաշտպանելու Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը, իսկ փոքր յետոյ դաշն կապեցին՝ յարձակողական ու պաշտպանողական։ 1854

փետրուար 4-ին դիւանագիտական յարաբերութիւնները խզեցին Ռուսիայի ու երկու արևմտեան պետութիւնների միջև և պատերազմը սկսուեց, Ղրիմի սարսափելի և աւերիչ պատերազմը, ուր հիւսիսի ահեղ վիթխարին, որ այնքա՛ն անգամ յաղթական կռիւներ էր մղել թզուկ Տաճկաստանի դէմ՝ սոսկումով յետ նահանջեց անգլո-ֆրանսական զօրքի գրոհի առջև և ջարդուեց ամենաողբալի կերպով։ Նիկոլայ կայսր յուսահատութիւնից դեռ պատերազմի մէջ տեղում „յանկարծամահ եղաւ“, ինչպէս որ փափկանկատութեամբ ասում է պատմագրողը...

Ղրիմի պատերազմը շատ նշանաւոր եղաւ իր քաղաքական ու սոցիալական հետևանքներով։ 1856 փետրուար 25-ին գումարուեց Փարիզում պետութիւնների համաժողով, որ և ստորագրեց մի շարք կարևոր վճիռներ, բոլորն էլ ուղղած ի՛մեաս Ռուսաստանի, յօգուտ Թիւրքիայի։ Սև ծովը չէզօք յայտարարուեց. ռուսաց հնվանաւորութիւնը վերացուեց Բալկանեան երկիրներից և այդ վերջինները ձեռք բերին կիսանկախ գոյութիւն Թիւրքիոյ վեհապետութեան տակ։ Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը դառնում է դօգմա միջազգային իրաւունքի և դիւանագիտութեան։ Թիւրքիան բարոյապէս կազդուրւում է և այնուհետև Անգլիայի ու Ֆրանսիայի շնորհիւ պատուաւոր տեղ է գրաւում մեծ պետութիւնների շարքում։ Պէտք էր, որ մի կերպ վարձատրէր նա իր բարերարներին նրանց ահագին ծառայութեան համար։ Սուլթանը զգում էր այդ, ուստի և դիւրութեամբ զիջեց երկու պետութիւնների յորդորներին, որոնք ըէֆորմներ էին պահանջում Թիւրքահպատակ քրիստոնեաների համար։

1856 փետրուար 18-ին հրատարակուեց Հատտի-Հիւմայունը, որով հռչակւում էր հաւասարութիւն բոլոր ազգութիւնների ու դաւանութիւնների և իրաւունք էր տրւում քրիստոնեաներին մտնելու ամէն տեսակ ծառայութեան մէջ, մինչև իսկ պետական խորհուրդ։ Սոսկ ձևականութիւն էր այդ հանդիսաւոր խոստումը, քանի որ ոչնչով չէր սրբագործւում։ Թիւրքիան կարող էր այն իրագործել կամ չիրագործել և վերջին դէպքում նա ենթակայ չէր ոչ մի բռնի միջամտութեան...

Այդպէս վերջացաւ Ղրիմի յիշատակելի պատերազմը։ Ռուսաստանի զինուորական մեծութիւնը խորտակուեց ընդերկար, այնինչ Թիւրքիան արևմտեան Եւրոպայի ուսերի վրայ բարձրացաւ, հպարտ, չարախնդաց, ամբարտաւան... Այնուհետև նա աւելի ևս բարբարոսացաւ իբրև տիրապետող ուժ իր սահմաններում, այնուհետև նա աւելի անգթութեամբ սկսեց հալածել իր հպատակ քրիստոնեաներին, քանի որ ապահով էր այլ ևս ռուսական միջամտութիւնից, քանի որ վստահ էր եւրոպական աջակցութեան վրայ։

—

Ռուսաստանը ուժասպառ, սնանկացած՝ Ալէքսանդր II-ի օրով խաղաղութիւն էր բաղձում։ Ղրիմի պատերազմը մի փառաւոր դաս եղաւ նրա համար։ Նա ապացուցեց, որ սոսկ քանակութիւնը դեռ ուժ չէ կազմում, նա ակներև ցոյց տուեց, որ զօրքի կազմակերպութիւնը, զինուորական սիստէմը, երկրի արդիւնաբերութիւնը և ընդհանուր քաղաքական-սոցիալական կազմը հիւանդ են արմատից և որ Ռուսաստանը կարօտ է խորունկ ըէֆորմների։ Պատերազմը իր աղետալի հետևանքներով չէր կարող չ՚անդրադառնալ երկրի ազգաբնակութեան և մանաւանդ ինտելիգէնտ խաւերի մտածողութեան վրայ։ Գրականութիւնը արդէն վաղուց մերկացնում էր ռուսական կեանքի մռայլ կողմերը, վաղուց ողբում էր հարիւր միլիոնաւոր ժողովրդի անօթութիւնն ու մերկութիւնը։ Բէլինսկի, Նեկրասով, Տուրգենեվ, Դոստոյէվսկի, Չէռնիշէվսկի, գրական փայլուն տաղանդներ, աներկիւղ բաց էին անում տիրող չարիքների բուն արմատները և չնայած ցենզուրական կամայականութիւններին՝ կծու քննադատութիւններ էին ուղղում ճորտութեան քստմնելի հաստատութեան դէմ, որ դարերից իվեր թագաւորում էր Ռուսաստանում։

Ճորտութիւնը տեսականապէս յաղթահարած էր արդէն, երբ վրայ հասաւ Ղրիմի պատերազմը իր հետևանք-ճգնաժամով։ Այդ ճգնաժամը անժխտելի կերպով ապացուցեց նոյնիսկ իրեն վեհապետին տիրող տնտեսական կարգերի վնասակարութիւնը և շուտափոյթ բարենորոգման անհրաժեշտութիւնը։ „Պէտք է խորտակել ճորտութեան կաշկանդող ռէժիմը—և այնուհետև ազատ աշխատաւոր ձեռքերը կը բազմանան, անհատական նախաձեռնութիւնը կը զարգանայ, երկրի առևտուրն ու արդիւնագործութիւնը կը բարգաւաճեն և ժողովրդի նիւթական մակարդակը բարձրանալով՝ կը ծաղկեն նաև պետական ֆինանսները — դերագոյն գրականը պատերազմների աջողութեան — կ՚աճի, կը ծաւալի զինուորական ուժը, վերջապէս կը լռեն ներքին յեղափոխական տարրերը“ — այս էր, անտարակոյս, իշխողների տրամաբանութիւնը Ռուսիայում, երբ ցար Ալէքսանդր II 1861 փետրուարի 19-ին իր նշանաւոր հրովարտակով ծանուցեց համայն Ռուսաստանին ճորտութեան սիստէմի ոչնչացումը։

Արքայական հրովարտակը ճորտութեան վերացման մասին սակայն շատ շուտով խոր հիասթափութիւն առաջացրեց։ Մարդկային ազատութեան մեծ սկզբունքի հռչակումը ցարի բերանով ունի անշուշտ իր պատմական նշանակութիւնը, իբրև մի քայլ առաջադիմութեան ճանապարհի վրայ։ Գիւղացու անձնաւորութիւնը իրաւաբանօրէն ազատ էր յայտարարւում. ճորտատէրը չէ կարող այլևս ծախել նրան, ծեծել, բռնանալ նրա վրայ։ Այնուամենայնիւ աշխատաւոր ընդհանրութիւնը գործնականապէս շատ քիչ բան շահեց։ Հողը ճորտատէրից անցաւ գիւղական համայնքին. մի խրճիթ, մի թեզաչափ հող բաժին հանուեց իւրաքանչիւրին, այն էլ ծանրաբեռնուած անթիւ ու բազմատեսակ տուրքերով։ „Տիրոջ“ իշխանութիւնից ազատուելով՝ գիւղացին ենթարկուեց պետական բիւրոկրատիայի կամայականութիւններին։ Ահա ինչու ներքին դժգոհութիւնները Ռուսաստանում չդադարեցին, և շարժումը ռուս ինտելիգէնցիայի մէջ այնուհետև աւելի ևս սաստկացաւ ու ծաւալուեց։

Ինտելիգէնցիայի աւելի արմատական մասը քարոզում էր յեղափոխութիւն։ Նիհիլիզմը — ծնունդ ընդվզիչ իրականութեան և արևմտեան դաղափարների ներմուծման — տարածւում էր ներսում և դրսում, համալսարանական երիտասարդութեան մէջ։ Չէրնիշէվսկի հրապարակ է նետում իր աշխարհահռչակ աշխատութիւնը— „Ի՞նչ անել“—ուր նկարագրում է նա ապագայ սոցիալական դրութիւնը։ Հերցէն, Բակունին, Օգարիով արտասահմանի մէջ են կենտրոնացնում իրենց ագիտացիական գործունէութիւնը։ Լոնդոնը և ազատ Զուիցերիան սիրով հիւրընկալում են փախստական

նիհիլիստներին։ Սարսափելի Կոլոկոլը *) (Զանգ) թոյն է ժայթքում Լոնդոնից, մահաբեր զօղանջիւնով ցնցում է նա բովանդակ Ռուսաստանը և պատերազմի է կոչում մարտական երիտասարդութիւնը՝ ընդդէմ միապետութեան։ Բուն երկրում, գլխաւորապէս մայրաքաղաքներում, հիմնւում են գաղտնի ընկերութիւններ, տպարաններ, որոնք սակայն երկար չէն ապրում. արքայական ժանդարմները լրտեսում են ամէն մի անկիւն, խուզարկում, ձերբակալում ու աքսորում են։ Չերնիշէվսկի, հանճարեղ մտածողը և ռուս ինտէլիգէնցիայի ամենափայլուն ներկայացուցիչը, աքսորւեց որպէս մի աւազակ, մի սովորական ոճրագործ՝ Սիբիրի խորքերը, ուր և ապրեց 20 տարի վայրենի եակուտների մէջ... Ներման արժանանալով՝ նա մի քանի տարի միայն ապրեց։ Այդ անսովոր մարդու թէօրիական ու գործնական տաղանդն էր, որ այնքան մեծ զարկ տւեց 60-ական թւերի ռուս յեղափոխական շարժման, որը ունեցաւ յետագայում իր փայլուն դիւցազներգութիւնը և որի վերջին ու ամենամեծ գործը եղաւ Ալէքսանդր II-ի մահւան դատավճիռը և իրագործումը (1881, մարտ)։

—

Հատտի-Հիւմայունի հրատարակումը մի առ ժամանակ վարդագոյն յոյսեր զարթեցրեց թիւրքահպատակ քրիստոնեաների մէջ։ Առաջին անգամն էր, որ իսլամական թիւրքիան ժխտում էր հռչակաւոր դօգմը մահմէդականի ու „գեաւուրի“ տարբերութեան մասին և բոլոր քաղաքացիներին հաւասար էր հռչակում օրէնքի ու հարկերի առաջ։ Աքանչելի յայտարարութիւն... Բայց որքա՞ն դառն էր այն թշուառների յուսախաբութիւնը, որոնք սուլթանական խօսքին հաւատալու միամտութիւն ունէին։ 60-ական թւականներին թիւրքիան ականատես եղաւ մի շարք իրարու յաջորդող ներքին խռովութիւնների ու ապստամբական կռիւների։ Լիբանանի քրիստոնեաների ջարդը դրուզների ձեռքով պատճառ եղաւ այդ երկրի անջատւելուն Օսմանեան պետութիւնից (1860)։ Ֆրանսիան էր այդ ազատարարը։ Կոտորւող մարոնիտները նրա հովանաւորութեան տակ էին։ 1861-ին ոտքի ելան սև-լեռնցի հռչակաւոր դիւցազունները Մոնտէնէգրէում և մի փառաւոր ջարդ տւին 20,000 տաճկական կանոնաւոր զօրքին։ Դարձեալ Ֆրանսիան էր, որ եւրոպական միջամտութիւն հրաւիրեց, և այնուհետև Մոնտէնէգրոյի անառիկ լեռներից ընդմիշտ վերացաւ սուլթանական վեհապետութիւնը։ Սև-լեռնցիների փայլուն յաղթանակով քաջալերւած՝ ապստամբեց Հերցեգովինան. 20,000 սպառազէն կտրիճներ չորս ամիս շարունակ դիմադրեցին թւով 60,000 տաճկական զօրքին։ Բայց Մոնտէնէգրոյի բախտը չէր վիճակւած նրան։ Եւրոպան այս անգամ մնաց բաժանւած և տրամադիր չէր միջամտելու. Ֆրանսիան զբաղւած էր Մէքսիկայի պատերազմով։ Թշնամու քանակական առաւելութիւնը յաղթեց վերջապէս, և Հերցեգովինան դարձաւ անապատ. բնակիչների մի մասը սրախողխող եղաւ, միւս մասը շարունակեց իր ստրկական գոյութիւնը թիւրքաց լծի տակ, որը այնուհետև դարձաւ աւելի ծանր, աւելի անողորմ։

Ահա վերջապէս Կրէտէն, միշտ կոտորւող, բայց և միշտ ըմբոստ Կրէտէն, որ նոյնպէս փորձ է անում, արեան ու արհաւիրքների այդ ժամանակներում թօթափելու իր վրայ ծանրացող տիրապետութիւնը։ Առաջին անգամը չէր, որ նրա հեստ զաւակները գլուխ էին բարձրացնում. 1770, 1821, 1841 թւականները յեղափոխական արիւնով են արձանագրւած Կրէտէի ազատագրութեան պատմութեան մէջ։ Վաղո՞ւց փափագում էր նա միացած լինել մայր-Յունաստանի հետ... Եւ ինչպէս միշտ, այս անգամ ևս ապստամբ կղզին մնաց անօգնական. Աւստրիան ու Անգլիան չուզեցին միանալ միւս չորս պետութիւններին, որոնք առաջարկում էին հաստատել Կրէտէում միջազգային մի յանձնաժողով, որը կարողանար սահմանել մի տանելի վարչութիւն քրիստոնեայ մեծամասնութեան և մահմէդական փոքրամասնութեան համար։ Տասնեակ տարիներ պիտի անցնէին այն օրից, մինչև որ մարտիրոս կղզին իր զաւակների բուռն ջանքերով կըստանար բաղձալի անկախութիւնը...

Տարօրինակ էր Բալկանեան երկրների ճակատագիրը և եւրոպական պետութիւնների դիրքը 60-ական թւերին։ Մի տեղ՝ արիւն, միջամտութիւն և յաղթանակ։ Մի այլ տեղ՝ միևնոյն Բալկանեան աշխարհում՝ քրիստոնեաների ահռելի ջարդեր և եւրոպական անտարբերութիւն։ Մինչդեռ Կրէտէն, Հերցեգովինան՝ լքւած քաղաքակիրթ աշխարհից, մատնւած իսաստ բախտի և կեանքի արհաւիրքների՝ ողբում էին իրենց դառն ճակատագիրը — Մոլդաւ-Վալախիան ու Սերբիան եւրոպական միջամտութեան շնորհիւ թօթափում էին օտարի լուծը և կազմակերպւում իբրև անկախ երկիրներ։ 1862-ին Ֆրանսիայի և Ռուսաստանի աջակցութեամբ Մոլդավիա ու Վալախիա միացան, ձուլւեցին մի անկախ պետութիւն (Ռումանիա)՝ ընդհանուր իշխանով ու մայրաքաղաքով։ Իսկ 1 67-ին նոյն երկու պետութիւնների վրայ յենւելով՝ Սերբիան դուրս քշեց իր սահմաններից տաճկական զօրքի վերջին մնացորդները...

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻԴ II. Փրանսական տանդէսի մը մէջ Մեծ Մարդասպանի մասին մօտէն եւ ձեռնհասօրէն ուսումնասիրւած հոյակապ եւ շահեկանօրէն համադրական յօդւած մը կայ, առնւած Ժօրժ Դօրիսի հրատարակւելիք „Աբդիւլ Համիդ II“ գրքէն։ Այս յօդւածը անտերեալի փաստերով, պաղարիւնութիւնով, անվրէպ տրամաբանութեամբ կը լուսաբանէ ամբողջ մարդկութեան աչքին առջեւ Մեծ Մարդասպանի խելագար հոգեբանութիւնը, իր այլազան եւ հակասական երեսներով, կը մտնէ անոր զգացումներու աղջամուղջին մէջ եւ կ'առաջնորդէ մեզ, Արիադնէի թելը բռնած, այն ոճրային լաբիւրինդոսի մէջ, որ կը կոչւի սուլթան Համիդի հոգեկան աշխարհը։ Հեղինակը կը քրքրէ մեր առջեւ դիտողի վարպետ մրցինով անոր բնախօսական կազմութեան զուգընթացաբար՝ անոր էութիւնը։ Կը բացատրէ մեզի՝ անոր անտերեալի եւ դժոխային նասսիրութիւնը եւ իր երկրին քանդումին „գերազոյն գործաւորի“ դերը։

Համիդի դէմքին վրայ հեղինակը տիրականօրէն կը թարգմանէ անաւոր ոճրագործի մը բոլոր յայտարար նշանները։

Սուլթան Համիդ հարագործ մըն է կրկին պատճառով. ժառանգականօրէն „մորուց“ իր վրայ կը կրէ ոճրագործի բոլոր արտաքին գծերը. երկրորդ՝ ապրած սարսափի մթնավայրին մէջ աւելի շեշտւած են անոր բնածին հարութիւնները։

Համիդ զգւելի ստեղծագործութիւն մըն է, հրէշ-գազան մը, զոր պէտք է հալածել արդարութիւնով եւ վրէժխնդրութիւնով մինչեւ ամայն։

Այդ նշանաւոր եւ հեղինակաւոր յօդւածը կը փութանք հաստատել „Դրօշակի“ մէջ։

---

*) Յայտնի ռուս յեղափոխական օրգան, որի ղեկավարն էր տարաղանդաւոր Հերցէն։

Սուլթան Համիդ 69 տարու է, կզակները լայնցած են, այնպէս որ երեսը դաժանային կոպիտ ձեւ մ'առած է. երեսոսկորները դուրս ցցւած են՝ փոսը ինկած այտերուն վրայ, կարճ ալեխառն մօրուքով, որ շէյխի մը պատուիրած դեղով միշտ կը ներկէ: Ճակատը թեթեւ մը կնմտ է, գլուխը ճաղատ եւ հալ գունատութիւն մը ունի: Վերի շրթունքը քարակ ու շար,— վարինը բարակ ու հեշտանքոտ արտայայտութիւն մը ունին: Բերանին նկարագիրը ամբողջացնող անգթութեան ծալքը աւելի խորունկ եւ տեսանելի է:

Սուլթանի բոլոր դիմագծերը անոր այլեւայլ նկարագիրներուն վկայնէրն են, նոյնիսկ իր կեղծաւոր անուշութիւնը ապացոյց է ատոր:

Իր ֆիզիքական կազմը անոր մտաւորականութեան վրայ ազդած է: Աբդիւլ Համիդ ջլախտաւոր մէն է, մենամոլ մը:

Թիւրք մը որ երկար ատեն անոր մտերմութիւնը վայելած է՝ կ'ըսէ. „Դեռ չեմ գիտեր՝ թէ Համիդ խելացի՞ մարդ է թէ ապուշ, արիասի՞րտ թէ վատասիրտ, ողջամի՞տ թէ յիմար“:

Մշտական երկիւղը՝ որուն մէջ կ'ապրի սուլթան Համիդ, անոր բոլոր խելքը միտքը լարած է իր անձին պաշտպանութեան համար եւ միմիայն այդ նպատակին ծառայող կարողութիւնները զարգացուցած է, ինչպէս կասկածոտութիւն, խորամանկութիւն, ինքնապաշտպանութիւն, որոնք տրէշայինօրէն զարգացած եւ իր ջլախտութենէ յոգնած ուղեղին մէջ բռնակալային մոլութիւններ եղած են: Համիդի մենամոլութիւնը այն կարգէն է, զոր բժիշկները կ'անուանեն „հալածական-հալածիչ“:

Դիւանագիտական վարդապետութիւններուն կատարեալ ճանաչութիւն ունի: Գիտէ խեղդել պետութիւններու պահանջները անոնց մէջ գժտութիւնը վառ պահելով, ինչպէս ըրաւ 1896-ի հայկական ջարդերուն:

Բայց այս բոլոր խելացիութիւնը աղիտաբեր է: Մահւան յաւիտենական սառսափի, խղճի խայթի եւ ձանձրոյթի որս եղած՝ իր անձին պաշտպանութեան մտմտուքը, իր կասկածոտութիւնը, նախզգուշութիւնը անգթութեան մղեցին զինքը: Իր անձին վրայ մտածող այս տխուր վեհապետը, երկրի դատին ծառայելու տեղ, կը կործանէ զայն:

Ցամառ է. ուժին առջեւ միայն տեղի կուտայ. միշտ նորնոր հնարագիտութիւնով ամէն վտանգէ կը խուսափի: Իր թշնամիներուն դէմ, որոնցմէ կը վախնայ, ամեն ցածութեան ընդունակ է. վրիժառութենէն հեշտանք կը զգայ:

Հիւանդ ջղերը կը հանդարտին, որը մէկուն արիւնը թափէ. „Իրկունը անկողին մտնելէ առաջ, կը պատմէ սենեկապետ մը, սպանութեան եւ գլխատութեան զրքեր կարդալ կուտայ. ոճիրներու պատմութիւնը կը ջղագրգռէ զինքը եւ չի կրնար քնանալ. բայց տէնց որ արիւնահեղութեան կէտը կուգայ, կը հանդարտի եւ քունը կը տանի“:

Բնականէն անգութ է: Օր մը անոր առջեւ կը խօսէին հին փատիշահներու բարբարոս սովորութիւններու վրայ որոնք իրենց վէզիրներուն գլուխը կոծին վրայ դրած գլխատել կուտային. Համիդ երազուն ձեւով, իբր կատակով, ըսաւ. „Մեղք որ ես այնքան չեմ կրնար“:

1895-ին Պապը Ալիի ցոյցէն ետքը՝ Ազգեան պատրիարքին (*) ըսաւ. „Հայերը այդ միջոցներով կուզեն եւրոպական միջամտութիւն տրաւիրել. լաւ գիտցէք որ եւրոպական նաւատորմները նեղուցներէն ներս կրնան մտնել եւ եւրոպական բանակները կոխել իմ մայրաքաղաքս, բայց անոնք իմ տոդիս վրայ կոխելէ առաջ Վոսփորի ալիքները բոլոր հայերի արիւնովը պիտի ներկուին“: Պատրիարքը անոր ոտքն ինկաւ, բայց Համիդ հրամայեց որ հեռանայ: Իսկ 1896-ի մեծ ջարդերէն ետքը Ազարեան կաթոլիկ հայերու պատրիարքը կանչելով՝ ինքզինք կ'արդարացնէր ըսելով, թէ ինք այդ ջարդերուն պատասխանատու չէ եւ պարզ գործիք մը եղած է:

Իր վրէժխնդրութենէն դժուար է ազատիլ. Օտեան էֆէնտի հազիւ Եւրոպա փախաւ, երբ իմացաւ մեծ սենեկապետ Քեամիլ պէյի միջոցով, որ սուլթանը մտադիր է զինքը մէջտեղէն վերցնել:

Այնպէս կը ցցէ որ ինք գթասրտութեան զանց մը է. գիտնալով որ ոչ ոք զինքը կը սիրէ՝ կ'աշխատի ամեն տեղ հաւակրութիւն վաստկիլ եւ յաճախ կը զանգատի մարդոց ապերախտութեան վրայ, այնպէս որ շատերը կը խաբուին:

Հազւագիւտ է տեսնել եւրոպացի մը, որ մօտենալով չի հրապուրուի անոր հաճոյք ընաւորութենէն, զոր գիտէ զարմանալի վարպետութիւնով շռայլել: Եւրոպայի ամենապարզ զբօսաշրջիկներն իսկ կը պատուասիրէ, սեղան կուտայ եւ սէլամլիքի ատեն անոնց արքայական բարեւներ կ'ուղարկէ: Ադ մարդիկը պիտի նկատեն որ Եւրոպայի տրտունջները անհիմն են սուլթանի դէմ եւ պիտի երթան Արեւմուտքի սալոններուն մէջ անոր՝ գովեստը ընել:

Նկարագրով շատ վատասիրտ է եւ ցած: Այն մարդէն ուրկէ կը վախնայ եւ որուն ձեռք չի կրնար դպցնել, զայն սիրաշահելու համար վերջին ծայր կրստորնայ:

Հայկական ջարդերուն ատեն, երբ Կլադստոն „Մեծ Մարդասպան“ անուանեց զինքը ու Լօնդօնի մամուլը կ'առաջարկէր գահէն վար առնել զայն, եւ երբ Սէյմուր ծովակալը Արշիպիղագոսի մէջ ժուռ կուգար, իրիկուն մը Լօնդօնի իր դեսպանէն հաղորդագրութիւն մը ստացաւ, որուն վրայ իր փրկութեան միակ միջոցը փախուստի մէջ փնտռեց. իսկոյն իր նախարարները արտակարգ ժողովի հրաւիրելով, կացութեան վրայ խորհուրդ տարցուց. այդ պահուն կայսերական հզէդդին շոգենաւը կազմ պատրաստ կեցած էր Պէշիկթաշի առաջ, փատիշահը Օդեսսա փախցնելու համար:

Իր նախարարներէն մին, Մահմուտ Ջէլալէտտին փաշան, առաջարկեց նախապէս Գերմանիոյ դեսպանին խորհուրդ հարցնել. սուլթանը անմիջապէս իր սիրականը, հզզէթ պէյը, ղրկեց Կիյօմի ներկայացուցչին. բայց մինչեւ անոր վերադարձը սուլթանը նեարդային դրութեան մէջ մոայլ անհանգստութեան մատնուած էր եւ արդէն իր մէջքի կամարին մէջ լեցւած էր բոլոր պանքնոտները, գոհարները: Երբ հզզէթ պէյ գերմանական դեսպանատունէն խոստում բերաւ, որ Կիյօմը պիտի պաշտպանէ „իր բարեկամը“, Աբդիւլ Համիդ՝ ուրախութենէն խելայեղ, հզզէթին առջեւ ծունկ չոքեցաւ եւ իր գորովի հաւաստիքը տուաւ անոր:

Համիդ ոեւէ քնական հաւակրութիւն չունի անկախ եւ պարտ հոգիներու համար. ամեն միջոց գործ կը դնէ կաշառելու եւ անոր արժանապատուութիւնը փճացնելու ջանքով: Կաշառելու շատ մը ձեւեր ունի, մանաւանդ երիտասարդութիւնը՝ պաշտօնով, շքանշանով, փողով եւն, երբեմն գործին մէջ գեղեցիկ կիներ ալ կը խառնէ: Եթէ մէկը հէրպուրի՝ կը լտեսի, կը զրպարտի, կը հալածի. Համիդ յաջողած է այսպէս ապականել ազգին ընտիր մասը եւ ստեղծել սերունդ մը, որուն մէջ ներարկեցին էն անքարոյական եւ էն նուաստ սկզբունքները:

Ալի Սայիպ փաշան, որ մինչեւ ան ատեն անբասիր մէկն էր, սէրասքէրութեան բարձրանալէ երեք օր վերջը սուլթանին ներկայացաւ: Խօսակցութեան ատեն սուլթանը ըսաւ. „Մտիկ ըրէք, սէրասքէր, գիտեմ որ ինծի ծառայողները՝ անձնուիրութիւն կը ցցնեն, բայց գիտեմ նաեւ որ անոնք իրենց շահերը անտես չեն ըներ եւ հարստանալնին կը նային“:

Ալի Սայիպ փաշան նախապէս գէշ տպաւորութեան տակ կը մեկնի, բայց սուլթանը ետքէն տեսաւ որ իր նախարարը ականջին օղ ըրած էր իր դասերը:

Սուլթանի կաշառագործութեան չափը անցաւ, երբ Եւրոպական մամուլի կարեւոր օրկանները ծայնը խեղդել ուզեց: Գնեց դիւանագէտներ, քաղաքագէտներ եւն:

Վեց ամսւան մէջ, ըսած է Սայիտ փաշան, հայկական ջարդերը օսմանեան գանձուն արժած էին. լրագիրներ վարձելու համար, մօտաւորապէս 640 պատուանշան եւ 235 հազար օսմանեան ոսկի:

Սուլթան Համիդ, այդ փոքրոտն Ցուգուրտան, փորձեց գնել „Թայմզը“: Պերլինի վեհաժողովի բացման ատեն, կ'ըսէր Սաֆֆէթ փաշային՝ „մէկ միլիոն ոսկիով կրնանք փակել Պիզմարքի բերանը“:

Համիդ ոչ կրօն ունի, ոչ հաւատք. միւսիւլման սովորութիւնները ասոնց կը յարգէ՝ միւսիւլման ամբոխին մոլեռանդութիւնը հզգոգելու համար, սաստիկ կ'ատէ քրիստոնեաները, յաճախ կեանքը քառը կը գործածէ անհաւատ ըսելու կամ միւսիւլման մը նախատելու համար:

Պարագային, հանմեսատ այլեւայլ կրօններու ներողամտութիւն եւ յարգանք կը կեղծէ: Ցունաց պատրիարքը ընդունելով կ'ըսէ անոր, թէ օրթոդոքսութիւնը կրօններու էն հզօրն է, քաղդէացւոց պատրիարքին, թէ իր դաւանանքը էն տրամաբանականն է. հրէից խախամապետին, թէ Մովսէսի օրէնքը էն ժամերկն է մարգարէի օրէնքին: Նախկին արարողապետ Միւնիր փաշան պատմած է սա նշանակալից դէպքը. „Սուլթանը օր մը Պապի պատիրակ մօնսէնէօր Պոնէտտիի երկար բարակ կը գովէր կաթոլիկութեան մեծութիւնը եւ պապութեան փառքը, այնքան ջերմեռանդով, որ մօնսէնէօրը խորապէս յուզւած կերեւար: Ունկնդրութիւնը վերջանալուն, Պոնէտտի կը մեկնի եւ սուլթանը Միւնիր փաշային „Ապուշը կ'ըսէ, քարքահ խնդալով—հաւատաց ինչոր կլլեցուցի, մինչեւ իսկ աչքերը լեցեցան“:

Համիդ իր ժողովրդին նկատմամբ անտարբեր է եւ արհամարհոտ եւ զայն անարգ հոտ մը կը նկատէ:

Համիդ իրեն մասին մեծ կարծիք ունի, բայց իր նախարարներուն եւ զինքը շրջապատողներուն քարոյական նկարագիրը լաւ կը ճանչնայ եւ այնպիսի գոյներով ու խօսքերով կը նկարագրէ որ գրչի ամօթխածութիւնը կամշնայ գրի առնել:

Մնգամ մը արեւելագէտ Վամպէրի սուլթան Համիդի հետ նստած կը խօսակցէր: Սենեակին խորը Սայիտ փաշան դռան ետեւ ոտի վրայ ներկայ էր այդ ունկնդրութեան: Իմիջի այլոց Վամպէրի խօսեցաւ բարեկարգումներու մասին եւ անոր նախարարներու գովեստը ըրաւ: Սուլթանը սկսաւ ծիծաղիլ:

„Ամենք ապուշ յիմարներ են“ պատասխանեց. յետոյ դառնալով —„այնպէս չէ՞“ հարցուց Սայիտ փաշային.— „Այո տէր“, փութաց պատասխանել մեծ վէզիրը: „Ամենքն ալ ասոր (վէզիրին) պէս են“, ըսաւ սուլթանը դառնալով Ղամպէրիին:

Սուտ է թէ համիդ կոյր գործիք է գինքը շրջապատողներուն ձեռք, ամեն բան գիտէ շնորհիւ իր անթիւ, անհամար լրտեսներուն եւ ամեն բան իր խորհրդովը՞ կը լլայ եւ ուրիշները իրեն գործիք են:

Ի՞նդունի միայն այն մարդոց խորհուրդները, որոնք իրեն պէս կը մտածեն:

Պօլսոյ Ջարդերէն ետքը, խաղաղութեան վերահաստատման համար շատերուն իր հետեւելիք ընթացքի մասին կարծիք հարցուց: Նըլդզի մէջ մոլորած սրտի ու խղճի տէր մարդ մը, սենեկապետ Ղմին պէյ, խոր եւ ազատամիտ բարենորոգումներու ծրագիր մը ներկայացուց: Սուլթանը կատղեցաւ եւ սենեկապետը անկէ իվեր աչքէ ինկած է: Ընդհակառակը Ռզզէթ պէյ անոր սիրելի ըլլալու համար խորհուրդ կուտար որ աւելի աւելի խիստ միջոցներ ձեռք առնէ:

Համիդը ընաւ երկիրը ինկած տեղէն վերցնելու ջանքեր չէ ըրած, բայց ամեն բան ըրած է զայն կործանելու, ամեն հարուածիւն գործած է զանին վրայ հաստատ մնալու համար: Իր հաստատակամ ուժին տարրերը քաղեց լրտեսութեան, տգիտութեան, անգթութիւններու, իրարձգութեան, անիրաւութեան, կաշառատուութեան եւն եւն մէջ:

Աբդիւլ Համիդ էն զարհուրելի գեղծումը ըրաւ սա երկու միացած նշանաբաններուն՝ „պետութիւնը, ես ինքս եմ“, „ինծմէ ետքը չ՝ոնեղ՝“, որոնք՝ զատ զատ գործադրելով իրենէն աւելի զօրաւոր պետական դրութեան մը մէջ, երկու անգամ կործանեցին զայն:

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Հայաստանի գերմանական որբանոցներու նպաստամատոյց յանձնաժողովին բերան Der christliche Orient ամսաթերթի հոկտեմբերի թիւը կը պարունակէ Խոյի որբանոցի տնօրինուհիին կողմէ գրուած՝ շատ բնորոշ տեղեկագիր-նամակ մը: Խօսելով որբերու աշխատասիրութեան մասին՝ տնօրինուհին կը գրէ.

„Ցակոբ մեր է՛ն ընդունակ եւ է՛ն յաջողակ տղան է. գերմանարէնի դասերուն սկիզբը անդամ մը սա նախադասութիւնը կազմեց ինձի — «իմ բախտս Բերլին է»։ — Բայց եթէ հոս մնայ, ապագային անպատճառ յեղափոխականներուն մէջ պիտի մտնէ, արդէն ամբողջովին տարոր հակամիտ է. բայց այժմ կրնայ լաւ ճանչցուիլ մէջ գրելիք, եթէ Գերմանիա տարուի։ Աղջիկները որոշած է հոդտանիլ. ամէն պարագայի մէջ տղայոց համար գերմանական խիստ դպրոցները հրաշալի են, մանաւանդ Ցակոբին համար“.

Այս շատ ախուր պարբերութիւնը կարդալէ յետոյ դժուար չէ գուշակել թէ ինչ պիտի դառնան մեր որբերը, եթէ այս ուղղութեամբ կը կրթուին ամէն տեղ։ Ս.Հաւասիկ հայ տղայ մը, որու մէջ սակայն դեռ թարմ հայ արիւնին բողոքը կը խօսի ու ինքնաբերաբար կը կարկառուի այն խումբին, որ այդ անհաւն բողոքին արտայայտութիւնն է։ Իսկ սատանաբարոյ տնօրինուհին, որ թերեւս ալ գվիցերուհի մըն է, Ալիէհէլմանէլի հայրենիքէն, անկարող այդ բնական հեզօր մղումին խորհուրդը հասկանալու, հարիւր մը կը մեկնէ զայն ու միջոց կ՝ուտաջարկէ հայ որբը ոլաւ ճամբու մէջ դնելու“ — հարութիւնն խլել զայն... „Աղջիկները որոշած էր հոդտանիլ“, բայց „գերմանական խիստ դպրոցները հրաշալի են մանաւանդ տղայոց համար“ — կ՝ըսէ գերման միսիոնարուհին։ Եւ ո՞վ գիտէ, քանիներ դարձած են եւ պիտի գնան այդ ոլաւ ճամբաներով՝, որ հացով կը սալատակեն քրիստոսապաշտ միսիոնարները...

„ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԻՆ ԵՒ ՆԵՐԿԱՑԻՆ“, մասն Ա, գրեց ԶԷՅԹՈՒՆՑԻ.— Սոյն գիրքը 160 երեսներու մէջ կը պատմէ մեզի (երկրորդ մասը պիտի նուիրուի Զէյթունի վերջի դէպքերուն) զէյթունցիներուն հերոսական պատմութիւնը, անոնց լեռնական անկախ ոգին, քաջագործութիւնները դրացի մոլեռանդ տարրերուն և ոսոխ կառավարութեան մը դէմ։ Հեղինակը իր պատմածներուն մեծ մասին ականատես եղած և ապրած է այն կեանքը, որով գործը շահեկանութեան հետ վաւերականութիւն ալ ունի։ Մեր ժողովրդի թշուառ, ըստրուկ վիճակին մէջ՝ բռնաւորներու լուծին և յաւիտենական անարգանքին ենթակայ, Զէյթունի պատմութիւնը սփոփիչ, օրինակելի և սրտապնդող դիւցազներգութիւնը կը հանդիսանայ մեր տարեգրութիւններուն մէջ։ Հրատարակուած է Վիեննա, Մխիթարեան տպարան, գինն է 3 ֆրանք 75 սանթիմ։

ԹԵՐԹՕՆ

„ՊՐՕ ԱՐՄԷՆԻԱ“

Նկատի ունենալով, որ Հայոց հասարակութեան մէջ կան շատերը, որոնց անմատչելի է ֆրանսերէն լեզուն՝ նոյնպէս և այնպիսիք, որոնք անկարող կը լինեն ձեռք բերել այդ հանդէսի համարները, մենք օգտակար ենք համարում, „Դրօշակի“ այս համարից սկսած, առաջ թարգմանել քաղուածօրէն կամ ամբողջօրէն „Պրօ Արմենիայի“ իւրաքանչիւր համարի աչքի ընկնող յօդուածները։ Այդպիսով յոյս ունենք, որ կարող ենք Հայոց հասարակութեան զանազան խաւերը տեղեակ պահել Եւրոպացի մեզ համակիր յայտնի գրողների մտքերին և պաշտպանողական խօսքին։

Այս անգամ առաջ ենք բերում ամբողջովին խմբագրական ծանուցումը, պ. Կլէմանսոյի յօդուածի առաջին մասը, մի կտոր Պիէռ Ջիաուի տեսութիւնից, և մի փոքրիկ հատուած Պրէսանսէի գրածից։

I

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«1894, 1895 եւ 1896-ի մեծ կոտորածներն, որոնք կատարուեցին սուլթան Աբդիւլ Համիդի հրամանով եւ առաջ բերին 300 հազար զոհեր, հազիւ են սկսում իրենց բոլոր մանրամասնութիւններով յայտնի դառնալ Եւրոպայում, եւ թէեւ նոր, բայց դրանք կը մոռացուին ու կը նետուին պատմական աղետների շարքը, եթէ մարդիկ հետեւեին քաղաքակրթութեան կարգ ու դիշողութեանը։

Սակայն այդ ժամանակներից իվեր՝ հայ ցեղի կանոնաւոր բնաջնջումը շարունակւում է աւելի ծանր, բայց նոյնպէս հաստատ միջոցներով. համաշխարհային վատասրտութեան դիմաց՝ առաջին ոճիրների հեղինակը մտածում է կատարելութեան հասցնել իր գործը եւ նորից վերսկսել Անատոլիայի մէջ ապանութիւն, թալան, բռնաբարում եւ հրդեհ։

Ակնառուր ֆրանսիացիների եւ օտար աշխատակիցների աջակցութեամբ՝ մենք պիտի հրապարակենք կատարած գազանութիւնները եւ անդադար պիտի յիշեցնենք Եւրոպային, որ դաշնադրերի զօրութեամբ նա իրաւունքներ ունի գործադրելու Մեծ Մարդասպանի դէմ եւ պարտա-

կանութիւններ՝ նրա խենթութեան զոհերի վերաբերմամբ։

Հարցը ոչ Օսմանեան երկրում ընակւող ոեւէ ցեղի դէմ խաչակրական ոգի արթնեցնելու եւ ոչ էլ այնտեղ դաւանւող ոեւէ կրօնի դէմ ատելութիւն սերմանելու մասին է։

Բայց եթէ մենք պատրաստ ենք լոյս ընծայել սուլթանի բոլոր ոճիրները այն ժողովուրդներից իւրաքանչիւրի դէմ, որոնց չար բախտը նրա հպատակներն է դարձրել, մենք մանաւորապէս աւելի պիտի յարենք հայկական տառապանքներին,

որովհետեւ այդ տառապանքները գերազանցում են բոլոր միւսներինը.

որովհետեւ միւս ազգութիւնների շարքում դա՝ մի խելացի, արեւմտեան քաղաքակրթութիւնը իւրացնելու ընդունակ ցեղի համար կեանքի ու մահուան խնդիր է.

որովհետեւ գործնականապէս Եւրոպան զինուած է Բերլինի դաշնագրութեամբ՝ վերջ դնելու այդ սարսափներին եւ պատրաստելու այդպիսով ամբողջ Տաճկաստանի վերածնութիւնը»։

„ՊՐՕ ԱՐՄԵՆԻԱՅԻ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

II

ԱՐԻԻՆԱՇԱՂԱԽ ՁԵՌՔԸ

Հողագնտի բոլոր մասերում մեր ժամանակը բնորոշւում է ուժի յաղթանակով եւ գաղափարի պարտութիւնով։ Դարանամուտ գազանների պէս, կարծեցեալ «վեհապետները» այն մարդկանց, որոնք թագնւած են նրանց պաշտպանութեան գործիքների ետեւը, սպասում են մի որսի, որ սանձարձակ սպանութիւնների դիմեն։ Աշխատաւոր ժողովուրդները ուժասպառ են լինում, որպէսզի բազմանան ջնջման այն գործիքները, որոնք պէտք է ոչնչացնեն նրանց ջանքերի արդիւնքները։ Տիրոջ մի հատիկ նշանով նրանք պատրաստ են իրար վրայ յարձակւել, սերմանելով ամենուրեք աւերում եւ մահ։ Սմբողջ քաղաքակրթութիւնը եկել, կանգ է առել կոտորածների մի ահագին կազմակերպութեան վրայ։ Մարդկային եղբայրութեան քարոզները ծիծաղելի, նոյնիսկ զզւելի են դարձել, որովհետեւ «դաւաճանութիւնը» այս «կոսմոպոլիտիզմի» վրայ է ծաղկում։ Մարդիկ՝ անկարող լինելով բանաւոր պատճառներով արդարացնել իրենց փոխադարձ ատելութիւնը, տրամադիր են իրար պատառոտել, իրար կոտորել։ Գուցէ պէտք է, որ նոքա արիւնով կշտանան, որպէսզի կարողանան այս մարդակերութեան գործողութիւններից զզւել։

Իսկ մինչ այդ, կոտորածների արհեստը ամենաազնիւ միջոց է համարւում խելքի եւ մտքի գործածութեան համար, եւ որովհետեւ իւրաքանչիւր արհեստ իր կատարելագործութեան կարող է հասնել միմիայն գործնական զարգացումով, սպանութիւնը իրենց համար արհեստ չինած մարդիկ վարժւում են սեւամորթների եւ դեղնամորթների վրայ, իբր անարգ էակների վրայ, որոնց Նախախնամութիւնը նրանց ձեռքն է յանձնում։ Սեւ Աֆրիկան՝ մատնուած սպիտակ քաղաքակրթութեան ամենավատ գազանութիւններին, կազմում է կոտորածների մի լայնատարած դաշտ, ուր կատարւում են մարդ-գազանի ամէն տեսակ բռնութիւնները։ Իսկ երբ սեւամորթները իրենց չեն պաշտպանում սպիտակների դէմ, սրանք սկսում են փոխադարձաբար իրար բնաջինջ անել։ Զօրեղի իրաւունքի հիման վրայ, Անգլիան ջնջում է մի կենդանի ազգութիւն՝ առանց ուրիշ ժողովուրդների կամ նրանց կառավարութիւնների կողմից ոեւէ բողոք յայտնելու։ Ցիշեցէք այն վերջանձն շարժումները, որոնք հետեւեցին Լեհաստանի բաժանման, եւ չափեցէք մեր եւրոպացած ճանապարհը։

Սպան իր բոլոր սահմանների վրայ միաժամանակ յարձակումների է ենթարկւած ու հիւսիսից եւ արեւելքից յարձակողները միմեանց հանդիպում են արդէն Հիմալայեան լեռների գագաթների առջեւ։ Դաշնակից Եւրոպայի զօրքերը այժմ բանակ են դրել չինական մայրաքաղաքի մէջ եւ դերմանական կայսրը նշանաբան է տուել իր ընդհանուր հրամանատարին. «վերթսէք Ատիլան. երբէք մի խնայէք»։ Կայսրի զինուորների նամակները, պատմելով գարշելի կոտորածների մասին, ցոյց են տալիս, որ այս խօսքերը գործադրւում են տառական մտքով, եւ ռուսները Մանջուրիայի մէջ հաղարաւոր չինացիներ դեռերն են լցնում առանց սեռի եւ հասակի խտրութեան։

Փոքր Ասիան ականատես է ոչ պակաս դարշութիւնների։ Այնտեղ Կարմիր սուլթանն է, որը, քրիստոնէութեան բարեացակամ հովանաւորութեան քողի տակ, հրով եւ սրով բնաջինջ է անում հայկական նահանգները։ Ո՞ւր են վաղեմի խաչակրաց արշաւանքները։ Ա՛հ, իսլամը իսկապէս յաղթեց քրիստոնեայ ասպետներին, որոնք Քրիստոսի գերեզմանը ազատելու պատրւակով՝ նետւեցին այնքան խենթ արկածների մէջ։ Ժամանակակից գաղթային քաղաքականութեան մոլեգնութիւնը կարիք ունէր բարեպաշտ մի պատրւակի։ Զինաստանի մէջ է այժմ, որ քրիստոնէական կեղծաւորութիւնը պարզւում է։ Միսիոնարները, որոնք հաւատի բերելու համար այնքան մարդիկ ունէին իրենց հայրենիքի մէջ կամ հէնց նոյն երկրում, որն ընդունեց Քրիստոսի վարդապետութիւնը, թոյլ են տալիս տաճիկ զինուորներին գտնակոծել աստւածային շիրիմի շուրջը գտնւող ուխտաւորներին եւ գնում են սաստելու դեղնամորթներին, որպէսզի ճանապարհ բաց անեն աշխարհակալ զօրքերին։

Սակայն՝ աստւածաշնչական տեսարանների հոգի վրայ՝ խալիֆա մարգասպանը գրգռում է մահմետական մոլեռանդութիւնը Հայաստանի քրիստոնեաների դէմ, եւ Քրիստոսի փոխանորդ Պապը մի բողոք, մի գթութեան կոչ չէ բարձրացնում, ոչ էլ մարդկային իրաւունքների պաշտպան Ֆրանսիան համարձակւում է արդարութիւն պահանջել կամ գոնէ մարդասիրական մի խօսք ասել։

Նշաւակել մի թագակիր աւազակ, որ գիւղեր եւ քաղաքներ աւարի է մատնում, անզէն մարդիկ է կոտորում, եկեղեցիների մէջ այրում է—ինչպիսի՞ լկանքներից յետոյ — կանայք, մանուկներ ու ծերեր, աւերակ դաշտերի մէջ է նետում անապատան, առանց տպրուսսի միջոցի մարդկային հոտեր, որոնց վերջապէս գայլերի կերակուր պիտի դարձնի ծեծը, — ո՞ւմ մտքից է անցնում։ Ռուսաստանը իր սահմանների վրայ խառնակութիւնների կարիք ունի՝ յարմար բոպէին իր միջամտութիւնը արդարացնելու համար։ Բացի դրանից՝ յունական ուղղափառութեանը դիւր չէ գալիս կաթոլիկ ազգաբնակութեան չափազանց բազմանալը։ Ուրեմն՝ թող տաճիկը իր ուղածին չափ արիւն թափէ։ Երբ ռուսը թոյլատրում է սպանել, Ֆրանսիան չէ. որ ձայն պիտի բարձրացնէ։ Հանօտօն եւ Լօբանօվ իշխում էին այն ժամանակ Ֆրանսիական հանրապետութեան վրայ, ինչպէս Լամդորֆ եւ Դելկասէն իշխում են այսօր։ Քանի՞ հոգի էինք մենք, որ աշխարհի բերանը ձգեցինք Սբ. Գիւլ Համիդին՝ «Մեծ Մարդասպանին»։ Ի՞նչ միջոցներով լռեցնել տւին միւսներին։ Առնւազն երկու տարի պահանջւեց, որպէսզի պարլամենտը նոյնպէս վրդովւէր, եւ արդիւնքը ի՞նչ։ Պարլամենտը կարող էր իր պատիւը պահել պարսաւանքի մի քւէարկութեամբ, բայց դա մեծ յանդգնութիւն համարւեց։ Դեռ բախտաւորութիւն է, որ Հանօտօն—«Կարմիր Սուլթանի» շողոքորթողը—չպահանջեց պարլամենտից շնորհաւորութիւններ հայկական կոտորածների համար...

Ժ. ԿԼԷՄԱՆՍՕ

III

Պ. Պ. Քիաուը Հայկական խնդրին նւիրած մի ընդարձակ և փայլուն առաջնորդողում, լուսաբանելով հետեւեալ երեք կէտերը՝ 1) որ դրութիւնը Տաճկաստանում այսօր նոյնն է, ինչ որ էր մեծ կոտորածների նախընթաց օրը, և որ օրէօր սպասելի է սպանութիւնների մի նոր տագնապ, 2) որ սուլթանը անձամբ պատասխանատու է Օսմանեան կայսրութեան մէջ կատարւած ոճրագործութիւնների համար և 3) որ Եւրոպան մեծ [illegible] դնել այդ

արիւնաշաղաղ օրգիային՝ գործադրել տալով գոյութիւն ունեցող դաշնագրութիւնները,—վերջացնում է իր յօդուածը այսպէս.

«Մի նոր ճգնաժամ սպասւում է. գուցէ մեղանից է կախուած դրա առաջն առնել կամ գոնէ մինչեւ վերջը անձկութեան եւ անընկճելի յոյսի աղաղակներ արձակել աշխարհի չորս կողմը։ Հայ ցեղը՞ դարուց դար ջարդուկտոր եղած, կարծես իր մէջ պարունակում է մի առանձին խորհրդաւոր կենսունակութիւն։ Կարելի է ասել, որ նրա հին տարեգրողները նախատեսել էին նրա տառապանքներն եւ նրա մեծութիւնը՝ Գրիգոր Լուսաւորչի առասպելի մէջ.

Տրդատ թագաւորը Լուսաւորչին բարձրացնել էր տուել ամենաբարձր պատի վրայ, ձեռք ու ոտքերը կապած, սանձը բերանին եւ մէջքը աղով կռռուած։ Այդ դրութեան մէջ Գրիգորը ողջ մնաց եօթ օր։ Այն ժամանակ Տրդատը նրան կախեց մէկ ոտից, գլխիվայր, հրամայելով աղբ վառել նրա գլխի տակ եւ մարմինը ծեծել ճպռոտով։ Այս անգամ էլ եօթերորդ օրը Գրիգորը դեռ կենդանի էր։ Տրդատը այժմ փչրել տուեց նրա ոտքերի ոսկորները՝ թոկերով սեղմած փայտերի մէջ։ Գրիգորը դարձեալ ողջ մնաց։ Յետոյ նրան պարկեցրին գետնի վրայ, արեւի տակ, երեսը դէպի երկինք, եւ գլուխը սեղմեցին ատաղձագործի մամուլի մէջ։ Այդ դրութեան մէջ նրա բերանը լցնում էին աղ, բոբակ եւ քացախ, դլուխը փաթաթում էին տաք-տաք մոխիրի տոպրակներով, երկաթէ ճանկերով խոցոտում էին նրա փորը եւ մարմնի վրայ ածում էին հալած կապար։ Գրիգորը այնուամենայնիւ կենդանի մնաց...

Այսպէս դարերի ընթացքում միշտ տանջւող Հայաստանը ողջ է մնացել մինչեւ այսօր։ Զգէտք է կարծել, որ ժամանակակից մարդիկ, որոնք իրենց քաղաքակրթուած են համարում, թոյլ կըտան, որ հայութիւնը անհետանայ երկրի երեսից, ու մեղսակից կը հանդիսանան սուլթան Աբդիւլ Համիդին եւ եւրոպական կառավարութիւններին»։

Պ. Ֆրանսիս Դը Պրէսանսէ իր՝ «Ցարը եւ Հայերը» վերնագրով կարճ, բայց կորուկ յօդուածում ժամանիշ անելով ռուս կառավարութեան ընթացքը դէպի իր հպատակ հայերը, հետեւեալ կերպով է ամփոփում իր միտքը.

«Սա մի սարսափելի եւ ապուշ բռնապետութիւն է։ Այս է այն բոլորը, ինչ որ («սուրբ Ռուսաստանը») առաջարկում է քրիստոնեայ Հայաստանին։

Իսկապէս սուլթանի եւ ցարի մէջ — սատանայի եւ խոր ծովի մէջ — հայերը կարող են յուսալ միմիայն իրենց, իրենց կազմակերպութեան, իրենց յոգնաշխատ ջանքերի եւ համայն աշխարհի մէջ արդարութեան եւ ցեղասպանութեան կուսակիցների համակրութեան վրայ»։

ՆԻՒԹԵՐ ԱՏՐՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Մորշախէն պ. Ար.-էն 3 ֆրանք, Նոյն տեղէն պ. Աշ.-էն 1 ֆր., Աստղ.-էն 5 ֆր., «Կոռունկ» խմբէն 66 ֆր. 25 սանթիմ, Ցուրիխէն՝ Աբ. Համ.-էն 3 ֆր., Կարիճէն 16 ֆր., Աղ.-էն 1 ֆր., Վէլ.-էն՝ Գեղունիէն 3 ֆր., Կալկաթայէն՝ Գ. Գ. եւ Ն. Տ. 25 ֆր., Մօլէկիւլից՝ 86 ֆր. 15 ս., 147 ֆր. 77 ս., 206 ֆր. 88 ս., Ճամբորդից նուէր 60 ֆր.։ Գումար 624 ֆր. 5 սանթիմ։

ՈՍԿԵՓԱՆՔԻ Կոմիտէն՝

Ցուլիս ամսէն առաջ Վեցհարիւրեան (հինգ ամսական) 100 դահեկան, «Արալօ» խումբ 40, եւս 46. 75, եւս 50. 50, Մահ (յունուար, փետր. եւ մարտ ամսավճար.) 87. 50, «Արշալիրեան» խմբէն՝ Ծառայ 20, Առիւծ 4, Արու-բաթք 20, Աղքատասէր Անուշեան 20, Որոտ երեք անգամէն 21, Կայծակ 20, Աշոտ-Երկաթ 10. 50, Զ. քաղաքի «Ազգասէր» խմբէն 80, ԱՐՇԱԿԱՒԱՆԷՆ 100 դահ. հետեւեալներէն՝ «Անմնազոհ» խումբ 60, «Երկիւղած» եւ «Ազգասէր» խմբերէն 40, Արեւ 20, Վեց հարիւրեան 20, Գ. Պ. 20, ԱՐՇԱԿԱՒԱՆԷՆ 95 դահեկան հետեւեալներէն՝ «Անմնազոհ» խումբ 60, «Երկիւղած» եւ «Ազգասէր» խմբերէն 35 դահ.։ Գումար 775. 25 դահեկան (ողջ)։

ՀՈՒՐ ԵՐԿԱԹԷՆ՝ Ծռանդ (եղբօրը յիշատակին) 1 օսմ. ոսկի 178. 50 դահ., Սուրհանդակ 1 օսմանեան ոսկի, Սոխակ 1 օսմանեան ոսկի Թուղթ 156 դահեկան, Քամ՝ 156 դահեկան, Դժբախտ 101. 50, Սանատրուկ 148. 50, Լուսին 33, Վահանին հայրը 82. 50, Հաճի պէրպէր 17. 50, Արշօն 99, Լուսին 66, Քազմեր Բերիէ 99, Շամցի 95, Երկու օխայ պատրաստ 66, Շաբաթ 66, Սոխ 65, Սեղրակին եղբօրմէն 17. 50, Անուն տուզաղ Դարձակ 70, Արթին փաշա 33, օր. Խալիս 42.։ Գումար 1985 դահ. (փուտ դրամ)։

Ցուլիս ամիսէն սկսած՝ ՆԻՆՈՒԷ քաղաքի «Սոսէ» խմբէն 60, «Արաբօ» խումբ 46, Պահլաւ 10, Վեց հարիւրեան 20, Վիշապ 10, «Արաբօ» խումբ կրկին 80, Առաջիազ (հին հաշիւէն) 30, «Որոտում» խումբ 37, Առիւծ երկու անգամէն 8. 25, Արեւ եւ Զինուոր 10-ական, Վիշապ կրկին (երկու անգամէն) 10, Լուսին Աստղ, Կարիճ եւ Ոմն 5-ական, Կրակ 5, Վահրամ եւ Սեպուհ 10. 50-ական, Վեց հարիւրեան 20, «Հրացան» 20, Զինուոր 10. 50, «Արաբօ» խումբ 80. 50, Վեց հարիւրեան 20։ ԱՐՇԱԿԱՒԱՆԷՆ՝, «Անմնազոհ» խումբ 84, «Երկիւղած» խումբ 30, «Ազգասէր» խ. 16, Ծիփիւր գիւղ 60 դահ.։ Գումար 718. 25 դահեկան (ողջ)։

ԱՄԵՐԻԿԱՅԻ Կեդր. Կոմիտէն՝

ՓՐՈՎԻՏԷՆՍԻ կոմիտէին (1899 յունվ.-դեկտ.)՝ Ա. Թ. 15. 25 դոլար, Վարաժ 11. 50, Բաբկէն 10. 75, Ն. Թ. 10, Պ. Թ. 10, Ա. Ս. 8. 50, Վարդգէս 8. 25, Ս. Մ. 8. 25, Վառոթ 8. 25, Ե. Տ. 8. 6. 50, Ա. Ն. 6. 25, Կ. Ե. 6, Պ. Մ. 5. 50, Զարեհ 5, Վահագն 5, Խոտարար 5, Կ. Տ. 8. 5, Ա. Մ. 5, Պ. Ա. 4 25, Հրաչեայ 4. 50, Կ. Ս. 3. 50, Տ. Խ. 3. 50, Ա. Ա. 3. 25, Մ. Պ. 3, Թաթուլ 3, Ասատուր 2. 50, Կ. Կ. 2. 25, Ա. Արշ., Վահրամ, Գուրգէն, Կայծակ, Մ. Ք., Վիշապ, Հաճի-Գ. 2-ական, Կրատինարով 1. 50, Ա. Զ., Գ. Ա., Լ. Պ., Կ. Խ., Տ. Տ., Սուրէն մէկ-մէկ, Որբիկ 50 սենթ։ Գումար 191 դոլար 75 սենթ։

ՓԻՋՊՈՒՐԳի կոմիտէին (1899 յուլիս-դեկտ.) անդամավճարներէ 18 դոլար 31 սենթ։

ՄԵԼՓԸՐՆԻ կոմիտէին (1899 յուլիս-դեկտ.) անդամավճարներէ՝ 17 դոլար 95 սենթ։

ՆԻԻ-ԵՕՐՔի կոմիտէին (1899 յունվ.-դեկտ) անդամավճարներէ 30 դոլար 36 սենթ։

ՓՕԼՐԻՎԸՐի կոմիտէին (1899 յունվ.-դեկտ.) անդամավճարներէ, նուիրատուութիւններէ եւայլն 37 դոլար 85 սենթ։

ՆԱԽԱՋԱՆԳՍՅԻ Կոմիտէն՝

«Նորաբոյս» ընկերութիւնից 40 ռուբլի, Գազանից 13, Մելիք, Սէֆէր 5-ական, Ցովսէփ, Միսաք 3-ական, Զօլօն 2, Ալօն, Պատօն, Ասպատուր, Ցարութիւն, Պետրոս, Ցարօն, Էլօն, Մուրատ, Վարդան, Գէորգ, Սահակ, Գասպար, Գօզան, Կարօ, Սարգիս, Ումրօն մէկ-մէկական, Փլան, Ասօն, Առաքել 50-ական կոպէկ, ՆՈՐ-ՔԱՂԱՔի «Զաւէն» խմբից՝ Տաճատ, Հայկ, Արշակ, Կարօ 10-ական կոպ., Սամէլ, Սանասար, Արծիւ 15-ական կոպ., Վարդան, Առիւծ 20-ական կոպ.։ Գումար 89 ռուբլի 75 կոպէկ։

ՔՕՍՏԱՆԶԱՅԻ «Դեւեան» խումբը ստացած է՝ Գ. Ս. 5 ֆրանք, Կ. Ն. 10, Վահրիշ 4, Ս. Մ. 2, Վեց ստացականով հաւակրողներէն ստացած է՝ Ա. Դեղ. 2, Ոմն 5, Գ. Մարգարեան Ս. Զ., Մ. Գ. Տ., Ե. Վ. մէկմէկ ֆր. Գումար 32 ֆրանք։

ԳԱՐԻՔ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

(ԱՐՏԱՏՊԱԾ «ԴՐՕՇԱԿ»-ԻՑ)

Լոյս տեսաւ առաջին գրքոյկը։ Գինն է 50 սանտիմ, ճանապարհածախսով 60 սանտիմ։ Դիմել՝

Rédaction du **Droschak**, Genève (Suisse)